AZG NEW PDF.qxd 30/04/2010 22:05 Page 1


# Ազգ

Azg

1 ՄԱՅԻՍ 2010 ՇԱԲԱԹ 79 (4459)

ISSN: 1829-1651


## «Ազգային անվտանգության խորհրդի նիստի վրա իր կնիքը թողեց 1915-ը»

Նախորդ օրն Անկարայում Թուրքիայի նախագահ Աբդուլլահ Գյուլի ղեկավարությամբ գումարվել է Ազգային անվտանգության խորհրդի նիստը, որը, CNN-Turk-ի վկայությամբ, շուրջ 6,5 ժամ է տեւել: Նիստի ավարտին Գյուլն առանձին ընդունել է վարչապետ Էրդողանին, գլխավոր շտաբի պետ Բաշբուղին եւ խորհրդի անդամ որոշ նախարարների: Նիստում քննարկվել են ահաբեկչության դեմ պայքարի, «Հյուսիսային Կիպրոսի Թուրքական Հանրապետությունում» անցկացված նախագահական ընտրություններին, տարածաշրջանին, այդ թվում՝ Հայոց ցեղասպանության ճանաչմանն առնչվող խնդիրներ:

Նիստի ավարտին խորհրդի քարտուղարությունը տարածել է հաղորդագրություն: Ըստ դրա, նիստում քննարկվել են «որոշ երկրների 1915-ի իրադարձություններին առնչվող հայտարարությունները», ինչպես նաեւ՝ Թուրքիայի ձեռնարկումները: Նիստում միաժամանակ ընդգծվել է, որ «հայ եւ թուրք ժողովուրդների համատեղ պատմությունը կարելի է գնահատել անվիճելի ապացույցների եւ հավաստի փաստաթղթերի հենքում, առանց կանխակալ հետեւությունների, անկողմնակալ եւ գիտական մոտեցումով»: Միաժամանակ ընդհանուր գնահատական է տրվել Հարավային Կովկասում տիրող իրավիճակին, դրա շրջանակում մասնացույց են արվել Կովկասի ողջ տարածքում կայունության եւ համագործակցության հաստատման կարեւորությունն ու այդ ուղղությամբ ջանքերը շարունակելու Թուրքիայի վճռականությունը:

Հ. Զ.

## Դեղորայքի շուկայի ճնաձկները տաքեցի՞ն

### Ինչո՞ւ հանձնաժողովը չեղյալ համարեց իր իսկ նշանակած տուգանքները

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Մի քանի օր առաջ տնտեսական մրցակցության հանձնաժողովը հերթական անգամ որոշում ընդունեց դեղորայքի շուկայում գների չհիմնավորված բարձրացման եւ հակամրցակցային համաձայնությունների առնչությամբ: Սակայն, այս անգամ, այդ որոշումը տրամագծորեն հակասում էր հանձնաժողովի նույն հարցի վերաբերյալ անցյալ եւ այս տարի ընդունած բոլոր որոշումներին: Եթե իր նախորդ որոշումներով, հանձնաժողովը հակամրցակցային համաձայնության գալու համար տուգանել էր դեղորայքի ներկրմամբ եւ իրացմամբ զբաղվող 7 ընկերությունների, այնուհետեւ, պատասխանելով այդ ընկերությունների դիմումին, ուժի մեջ թողել տուգանքը, ապա այս անգամ ընդունեց տրամագծորեն հակադիր որոշում:

Մասնավորապես, հանձնաժողովի պաշտոնական հաղորդագրության մեջ նշվում է. «Հանձնաժողովն անվավեր է ճանաչել դեղորայքի շուկայում հակամրցակցային համաձայնության համար տուգանված 7 ընկերությունների նկատմամբ տուգանքի որոշումը: Հանձնաժողովի որոշումը անվավեր ճանաչելու պահանջով դատարան ներկայացված հայցադիմումներում նշվել են որոշ հանգամանքներ, այդ թվում՝ ապացույցների վերաբերյալ, որոնք հիմք են հանձնաժողովի որոշումն անվավեր ճանաչելու համար: Միեւնույն ժամանակ, հանձնաժողովը համարում է, որ դեղորայքի շուկայում առկա են մրցակցային խնդիրներ, որոնց բացահայտման եւ կարգավորման նպատակով հանձնաժողովը ծրագրել է մոտակա ժամանակներս առավել խորությամբ ուսումնասիրել շուկայում առկա իրավիճակը եւ ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցառումները՝ եղած խնդիրները լուծելու ուղղությամբ»:

Տես էջ 3

## Նախագահի մասնակցությամբ բացվել է հայկական տաղավարը «Շանհայ-էքսպո-2010»-ում

Ինչպես արդեն տեղեկացրել է մեր թերթը՝ ապրիլի 29-ին Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանի գլխավորած պատվիրակությունը Չինաստանի նախագահ Հու Ցզինթաոյի հրավերով մեկնեց Չինաստան՝ մասնակցելու «Շանհայ-էքսպո-2010» ցուցահանդեսի բացմանը:

Ինչպես տեղեկանում ենք նախագահի պաշտոնական կայքից, երեկ Սերժ Սարգսյանի մասնակցությամբ Շանհայում բացվել է Հայաստանի տաղավարը: Հայաստանի նախագահը շրջել է նաեւ ԱՄՆ-ի, Ռուսաստանի եւ Չինաստանի տաղավարներով:





## Թուրքիային միջնորդ դառնալու համար առնվազն անհրաժեշտ է հակամարտության բոլոր կողմերի համաձայնությունը

Ռուսաստանը դեմ չէ Հայաստանի, Ադրբեջանի եւ Իրանի արտաքին գերատեսչությունների ղեկավարների եռակողմ հանդիպման առաջարկությանը, որ ներկայացրել է Իրանը՝ քննարկման թեման ղարաբաղյան հարցը դիտարկելու համատեքստում: Երեկ, «ՌԻԱ Նովոստի» գործակալության տեղեկացմամբ, այդ մասին հայտարարել է Ռուսաստանի ԱԳ նախարարության պաշտոնական ներկայացուցիչ Անդրեյ Նեստերենկոն:

Մեկնաբանելով Իրանի՝ եռակողմ արտգործնախարարական մակարդակով հանդիպում անցկացնելու առաջարկությունը, Նեստերենկոն հայտարարել է. «Նման հանդիպման առնչությամբ մենք դեմ ոչինչ չունենք: Եթե նման հանդիպում կայանա, ակնհայտորեն կարիք կլինի սպասել արդյունքներին եւ միայն այն ժամանակ խոսել ղարաբաղյան հակամարտության կարգավորման հարցում իրանական կողմի միջնորդ լինելու հնարավորության մասին»:

Նեստերենկոն ընդգծել է, որ ներկա փուլում ղարաբաղյան հակամարտության կարգավորմանը մասնակցելու առնչությամբ Իրանի առաջարկությունը վերաբերել է միայն եռակողմ հանդիպում անցկացնելուն:

Ինչ վերաբերում է Թուրքիայի՝ ղարաբաղյան գործընթացին ամեն կերպ խառնվելու նկրտումներին, ապա այդ առնչությամբ էլ ՌԴ ԱԳՆ ներկայացուցիչը նշել է, որ Ռուսաստանը պաշտոնապես որեւէ առաջարկություն չի ստացել Ադրբեջանից Լեռնային Ղարաբաղի հարցով միջնորդական առաքելություն իրականացնող ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների կազմում Թուրքիան ներառելու համար:

«Ռուսաստանը՝ որպես Մինսկի խմբում համանախագահ երկրներից մեկը, նման առաջարկություն, եթե անգամ եղել է, պաշտոնապես չի ստացել: Ամեն դեպքում, որպեսզի այս խոսակցությունն անցնի գործնական հարթություն, նվազագույնը անհրաժեշտ է հակամարտության բոլոր կողմերի համաձայնությունը», ասել է Նեստերենկոն, հստակ ենթատեքստով ավելացնելով, «որ, հաշվի առնելով հայ-թուրքական հարաբերությունների նորմալացման արձանագրությունների վավերացման գործընթացի կասեցման հանգամանքը, «դժվար թե կարելի է հույս դնել նման համաձայնության վրա»:

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

## Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի շնորհավորական ուղերձը Աշխատանքի օրվա կապակցությամբ

Հարգելի՛ աշխատավորներ

Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի նախագահությունը շնորհավորում է ձեզ Աշխատանքի օրվա կապակցությամբ:

Ավանդաբար նշվող այս տոնը կոչված է փառաբանելու եւ մեծարելու աշխատանքն ու աշխատավոր մարդուն, ովքեր իրենց ամենօրյա տքնաջան աշխատանքով նպաստում են մեր երկրի առաջընթացին:

Արհմիությունները, լինելով աշխատավորների աշխատանքային ու դրա հետ կապված սոցիալական ու այլ շահերի պաշտպանը, խոր գիտակցում են, որ ներկա խնդիրների լուծումները պետք է խարսխվեն աշխատավորների շահերի պաշտպանության, ինչպես նաեւ արհմիութենական շարժման եւ համագործակցության երաշխիքների հենքի վրա: Հենց այդ գիտակցումով արհմիությունների կոնֆեդերացիան հրապարակ ձեւով արձագանքում է աշխատավոր մարդու շահերի պաշտպանության հետ կապված յուրաքանչյուր խնդրին: Վկան՝ այն հայտարարություններն են կապված համաշխարհային ֆինանսական ճգնաժամի կապակցությամբ, հանրապետությունում գների բարձրացման վերաբերյալ, որոնցում ՀԱՄԿ-ը իր մտահոգությունն է հայտնել աշխատավորների սոցիալական վիճակի, հանրապետությունում լայն սպառման ապրանքատեսակների եւ ծառայությունների շարունակական գնաճի կապակցությամբ:

Արհմիությունները հետամուտ են, որպեսզի մեր երկրում արժանապատիվ աշխատանքի եւ արժանապատիվ վաստակի հնարավորությունները շարունակաբար աճեն:

Փառք ու պատիվ հայ աշխատավորին, աշխատավորական կոլեկտիվներին, ովքեր ցանկացած դժվարին պայմաններում միշտ էլ հաջողությամբ շարունակել են արարելու, հայրենիքը շենացնելու իրենց նվիրական գործը:

Մեկ անգամ եւս շնորհավորելով մայիսմեկյան տոնի առթիվ՝ մաղթում ենք ձեզ խաղաղ ու ստեղծագործ աշխատանք՝ հանուն ձեր ընտանիքների բարեկեցության եւ մեր երկրի բարգավաճման:

Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի նախագահություն

## Ահմադինեժադը կմեկնի՞ Վաշինգտոն

ԱՄՆ-ի պետդեպարտամենտի ներկայացուցիչը հաստատել է, որ Նյու Յորքում մայիսի 3-ին նախանշված միջուկային զենքի տարածումը կանխելուն նվիրված ՄԱԿ-ի համաժողովին կմասնակցի նաեւ Իրանի նախագահ Մահմուդ Ահմադինեժադը: Նրա նախաձեռնությունը՝ անձամբ մեկնել ԱՄՆ եւ գլխավորել իրանական պատվիրակությունը, կոչված է խափանելու Վաշինգտոնի ծրագրերը, որ փորձում է համոզել միջազգային հանրությանը՝ Իրանի դեմ նոր պատժամիջոցներ կիրառել:

## 2-3 օրից գազի մատակարարումը կվերականգնվի

Ինչպես տեղեկացնում է «Ջորջիա օնլայն» կայքը, Վրաստանի տարածքով Հայաստան մտնող գազի մատակարարումը կվերականգնվի 2-3 օրից: Ինչպես երեկ տեղեկացրել էր «**Ազգը**», գազամատակարարումը կասեցվել է Վրաստանի լեռնային շրջաններից մեկում՝ Կոբի-Գուդաուրիում առաջացած սողանքի հետեւանքով: Երեկվա դրությամբ Վրաստանի Գազի եւ նավթի ընկերության աշխատակիցները կատարում են վթարի վերացման աշխատանքներ:

## 1 500 000 հայերը կամ Արեւմուտքի շիզոֆրենիան

Չեխական ազդեցիկ «ՄՖ Դնես» օրաթերթի խմբագիր Միլան Վոդիչկան ապրիլի 27-ի համարում «1 500 000 Հայերը» ծավալուն հոդվածով անդրադարձել է հայերի ցեղասպանությանը՝ այն համարելով ժամանակակից պատմության առաջին Հոլոքոսթը: Հեղինակը խնդրի բազմակողմանի ներկայացմամբ տալիս է պատմական վկայություններ՝ սկսած օտար հյուպատոսների թողած վավերագրերից մինչեւ Հիտլերի հայտնի խոսքը: Վերլուծելով հայերի ու թուրքերի միջեւ առկա պատմական կնճիռը՝ հեղինակն ընդգծում է, որ Թուրքիան 95 տարի շարունակ հմտորեն շահարկում է իր դիրքը, եւ այդ պատին բումերանգի պես վերադառնում է այսօր: Հոդվածագիրը, նշելով թե եվրոպական քանի երկիր է ընդունել Ցեղասպանությունը, եւ մեջբերելով Չեխիայի արտգործնախարարության խոսնակին, նշում է, թե չեխական խորհրդարանում դեռեւս չի բարձրացել այդ հարցը: Միլան Վոդիչկան կշտամբում է նաեւ ԱՄՆ նախագահ Օբամային, որն իբրեւ սենատոր ասում էր Ցեղասպանություն եւ քննադատում էր Բուշին այդ բառը չօգտագործելու համար, իսկ երբ դարձավ նախագահ, այլեւս չօգտագործեց այդ բառը: Ընդհանրապետ, այս հարցում, ըստ հոդվածագրի, Արեւմուտքը շիզոֆրենիայի մեջ է. մի կողմից ուզում են, որ Թուրքիան պատասխանատվություն կրի հայկական ջարդերի համար, մյուս կողմից ցույց են տալիս, որ դա իրենց համար միեւնույնն է:

Հ. Ա.

Պրահա



12 A publicistika

ÚTERÝ 27. DUBNA 2010 WWW.IDNES.CZ DNES

# 1 500 000 Arménů

**První moderní holokaust** „Kdo si dnes vzpomene na masakr Arménů?" řekl Hitler, když se chystal na Židy. 95 let poté, co osmanská říše vybíjením Arménů zahájila první „konečné řešení", zůstává masakr stále nedořešen. Genocida na Východě dodnes štěpí Západ: Turci jsou příliš cenný spojenec, než aby je někdo dráždil.

Když jsem před mnoha lety projížděl východní Sýrií, v poušti u města Dajr az-Zor ležela kostra velbloudа. „Jestli to není nějaký Armén," zavtipkoval tehdy průvodce. Vůbec jsem nechápal, co tím chtěl říct.

Je neuvěřitelné, že lze během pár měsíců vyhladit půl národa, a ještě neuvěřitelnější je, že se na to dá téměř zapomenout.

Krev začala ve velkém téct 24. dubna 1915 a v následujících měsících osmanská říše ukázala, že vyvraždit jeden a půl milionu lidí není kupodivu tak obtížné, jak by se i tehdy, uprostřed krutostí první světové války, zdálo. Byl to mnohem větší mlýnek na maso než ten, který se brzy nato začal točit u Verdunu. Jen bylo třeba vědět, jak na to.

A Turci to věděli dobře. Dokonce natolik, že se zapsali do historie prvním moderním holokaustem. To není nějaké dodatečné hodnocení z přecitlivělého dneška: „... v tomto administrativním holokaustu se vylidnily celé oblasti," napsal Winston Churchill počátkem 20. let.

Turci byli výkonní popravčí. Jeden a půl milionu lidí vyřídili systematicky, takřka průmyslově. V zásadě měli tři hlavní metody, jak to provést ve velkém – a levně.

Utopení. Italský konzul Giacomo Gorrini napsal: „Viděl jsem tisíce nevinných žen a dětí, které nalodili na čluny, jež potopili v Černém moři." Dělalo se to i jinak: hlídači spoutali dohromady třeba stovku mužů, svrhli je do vody z mostu a pak několik zastřelili. Mrtví stáhli pomalu ostatní pod hladinu. Tohle bylo fakt opravdu levné.

Uchození. Úřady začaly organizovat masový přesun statisíců Arménů do pouště na pomezí Sýrie a Iráku, Turci je tam vodili nesmyslnými oklikami bez jídla, bez vody, až většina lidí pomřela cestou. „Cesty a řeka Eufrat jsou přeplněny těly mrtvých a ti, kdo přežili, jsou stejně odsouze-

Viděl jsem tisíce nevinných žen a dětí, které nalodili na čluny, jež potopili v Černém moři

**To není rok 1943, ale 1915** Snímek mrtvých Arménů, hlavně žen a dětí, který pořídil německý důstojník Armin Wegner, jenž byl v té době přidělen k 6. turecké armádě

Foto: archiv

tahle obrovská řež pořád vrací jako bumerang.

Ve světě převládá názor, že masakr byl první genocidou moderního věku, Turecko

FAKTA

Schizofrenie Západu

Výsledkem je, že se celý problém zapouzdřil, ale nehojí se.

Turci věděli, že s nimi nemůže nikdo hnout. Dobře je to vidět na Americe. Strate-

Inspirace pro Hitlera?

AZG NEW PDF.qxd 30/04/2010 21:56 Page 1



# Այս տարի արդեն արձանագրվել է ծնելիության մակարդակի բարձրացում

Երեկ «Տեսակետ» ակումբում՝ լրագրողների հետ հանդիպման ժամանակ Ազգային վիճակագրական ծառայության մարդահամարի եւ ժողովրդագրության բաժնի պետ **Կարինե Կույումջյանն** ամփոփեց 2010-ի առաջին եռամսյակի ժողովրդագրական տվյալները:




«Նախորդ տարվա առաջին եռամսյակի համեմատությամբ այս տարի ունենք կենդանի ծնունդների շուրջ 7,2 տոկոս աճ: Առաջին 3 ամիսների ընթացքում արձանագրվել է 10611 կենդանի ծնունդ, իսկ 2009 թվականի առաջին երեք ամիսներին՝ 9902 կենդանի ծնունդ», նշեց Կարինե Կույումջյանը եւ հավելեց, որ հիմա ավելի շատ ծնվում են տղա երեխաներ:

Բանախոսի տրամադրած տվյալների համաձայն՝ առաջին եռամսյակի ընթացքում հանրապետությունում շուրջ 7,3 տոկոսով նվազել է մահացության ցուցանիշը: 2010-ի առաջին երեք ամիսներին արձանագրվել է 7280 մահացության դեպք, իսկ 2009-ի նույն ժամանակում՝ 7856:

«Ժողովրդագրական կարեւոր ցուցանիշ է համարվում 0-1 տարեկան մահերի ցուցանիշը: Որեւէ երկրի սոցիալ-տնտեսական իրավիճակը գնահատելիս միշտ հաշվի են առնում 0-1 տարեկան երեխաների մահվան դեպքերը: Առաջին եռամսյակում արձանագրվել է 113 մանկական մահացության դեպք, իսկ 2009-ին՝ 111 դեպք», նշեց Կարինե Կույումջյանը:

2010-ի հունվար-մարտ ամիսներին ծնվածների թվաքանակը 1,5 անգամ ավելի է, քան մահացածներինը: Այս եռամսյակում գրանցվել է մայրական մահացության մի դեպք, անցյալ տարվա առաջին եռամսյակում՝ 2 դեպք:

Ծնունդների ու մահերի տարբերությունով բնակչության բնական հավելաճը կազմել է 3331 մարդ, իսկ անցյալ տարի առաջին եռամսյակում կազմել է ընդամենը 2045 մարդ:

«Բնական հավելաճի ու միգրացիայի արդյունքում բնակչության թվաքանակում արձանագրվել է փոփոխություն: 2010-ի ապրիլի 1-ի դրությամբ բնակչության թվաքանակի ցուցանիշը կազմել է 3251900, իսկ 2009-ին՝ 3238900», տեղեկացրեց բանախոսը:

2010 թվականին արձանագրված 7280 մահվան դեպքից շուրջ 50,3 տոկոսը կամ 3665 դեպքը արյան շրջանառության համակարգի հիվանդությունների հետեւանքն են:

Կարինե Կույումջյանը ներկայացրեց նաեւ ամուսնությունների, ամուսնալուծությունների վերաբերյալ իր ունեցած տվյալները: Առաջին եռամսյակում արձանագրվել է ամուսնության ցուցանիշի նվազում՝ շուրջ 3 տոկոսով:

Առաջին 3 ամիսների ընթացքում, ըստ Կարինե Կույումջյանի, ունեցել ենք 4430 ամուսնության դեպք, իսկ 2009-ի նույն ժամանակում՝ 4569 ամուսնության դեպք, փոխարենը նվազել են ամուսնալուծությունները:

ԻՆԳԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՕԴԵՐԵՎՈՒԹԱԲԱՆ

# Տեղումները չեն դադարում, գյուղացիներն էլ ստիպված են տագնապած սպասել

**Ջերմաստիճանի էական բարձրացում սպասվում է մայիսի 7-ից: Մինչ այդ տեղումները դեռ կշարունակվեն, եւ ջերմաստիճանը չի հասնի 25-ի: Մայիսի 2-ին եւ 3-ին հանրապետությունում տեղումներ կգրանցվեն եւ կպահպանվեն նաեւ հաջորդ երկու օրերին: «Երեւանում տեղումներն առավել հաճախ կգրանցվեն հատկապես երեկոյան ժամերին: Օդի ջերմաստիճանը ցածր կլինի հատկապես մայիսի 3-ին՝ պայմանավորված ամպամածությամբ: Առաջիկա 2-3 օրերին ջերմաստիճանը կտատանվի 15-17 աստիճանի սահմաններում», «Հենարան» ակումբում ասաց Հայպետհիդրոմետի օդերեւութաբանական ծառայության օպերատիվ կենտրոնի ղեկավար Զարուհի Պետրոսյանը:**




**Ամռանն օդի ջերմաստիճանը լինելու է նորմայի սահմաններում, իսկ տեղումները՝ նորմայից պակաս: Զարուհի Պետրոսյանի դիտարկմամբ՝ տարին բավականին տեղումնառատ է, օդի ջերմաստիճանը, նորմային մոտ, մի փոքր բացասական շեղմամբ:**

## Բերք, այնուամենայնիվ կունենանք

**Գարնանացան գարու եւ ցորենի ցանքերի միայն 40 տոկոսն է կատարվել: Պատճառը ապրիլյան անբարենպաստ պայմաններն են: Գյուղատնտեսական գիտությունների թեկնածու Գառնիկ Պետրոսյանը նկատում է, որ ուշ կատարված ցանքերը չեն կարող լավ արդյունք ապահովել: «Եղանակային պայմանների բարելավման հետ գյուղացիները պետք է շտապեն կատարել մնացած աշխատանքները», «Հենարան» ակումբում նշեց Գառնիկ Պետրոսյանը:**

**Եթե Արարատյան դաշտավայրում տեղումների հետեւանքով էական վնասներ չկան, ապա Գեղարքունիքի, Սյունիքի եւ Շիրակի մարզի ֆերմերները պետք է շտապեն կատարելու գարնանային աշխատանքները: «Արարատյան հարթավայրում լուրջ խնդիրներ են առաջանում պտղատու տեսակների հիվանդությունների զարգացման առումով, որովհետեւ բարձր խոնավության եւ սպասվող բարձր ջերմաստիճանի պայմաններում դա կարող է բերել դեղձենու եւ ծիրանենու սնկային հիվանդությունների», ասաց Գառնիկ Պետրոսյանը: Այս տարի ծիրանենին ծաղկել էր սովորականից կես ամիս շուտ: Ապրիլյան ցրտերն ու տեղումներն ունեցան իրենց բացասական ազդեցությունը, սակայն Գառնիկ Պետրոսյանը նկատում է, որ բերք, թեպետ ոչ բավարար քանակությամբ, այնուամենայնիվ, շուկայում կլինի:**

ԱՐԵՎԻԿ ԲԱԴԱԼՅԱՆ

# Խթանել աշխարհասփյուռ հայերի հայրենադարձությունը

Հայաստան-սփյուռք գործակցության եւ հարաբերությունների ամրապնդման նպատակով սփյուռքի նախարարությունը հրատարակել է ձեռնարկ այլ պետություններում բնակվող հայերի համար: Նպատակն է գիտելիքներ եւ տեղեկատվություն ապահովել օտար երկրներում բնակվող հայերին՝ հնարավորություն տալով նրանց մասնակցելու եւ ներդրում ունենալու հայրենիքի զարգացման գործընթացներում, աջակցել հայրենիքի հետ կապի պահպանմանն ու խթանել նրանց հայրենադարձությունը:




Ձեռնարկը մատչելի կերպով վերլուծում է այն իրավական ակտերը, որոնք պարունակում են օգտակար տեղեկություններ սփյուռքահայերի վերադարձի, այստեղ վերահաստատման, ՀՀ-ում ապրող օտարերկրյա քաղաքացիների իրավական կարգավիճակի մասին:

Գրքում առանձին գլուխներով ներկայացված են հանրապետությունում ազգությամբ հայ օտարերկրացիների իրավունքներն ու պարտականությունները, հայերի իրավունքներն արտասահմանում, ՀՀ-ում քաղաքացիության ճանաչումը, զինապարտության կարգավորումը, կենսաթոշակ, սոցիալական նպաստներ ստանալու, կրթության եւ սեփականության իրավունքները, աշխատանքային գործունեությունն ու մաքսային արտոնությունները: Հ. Հ.

# Հայաստանը, Վրաստանը եւ Ադրբեջանը մեկ տուրիստական փաթեթի մե՞ջ

**Հարավային Կովկասի երկրներին մեկ տուրիստական փաթեթի մեջ ներառելու նախաձեռնությամբ հանդես է եկել Վրաստանի զբոսաշրջության եւ հանգստյան գոտիների պետական վարչության տնօրենի տեղակալ Վախթանգ Ասաթաշվիլին: «Վրաստանը չափազանց փոքր երկիր է տուրիստական շուկայի համար, ուստի մենք, ինչպես նաեւ դոնոր կազմակերպությունները, հետաքրքրված ենք Հայաստանին եւ Ադրբեջանին մեզ հետ ներառելու մեկ տուրիստական փաթեթում, որտեղ Վրաստանը կլինի դոմինանտ: Այս պարագայում զբոսաշրջիկը մեկ փաթեթով հնարավորություն կստանա այցելելու ոչ թե կոնկրետ երկիր, այլ՝ ամբողջ տարածաշրջան: Կարծում եմ, որ նախաձեռնության իրականացումից հետո մենք կունենանք զբոսաշրջիկների անհամեմատ ավելի մեծ հոսք», նշել է Ասաթաշվիլին:**

# Թուրք հասարակական գործիչը հրաժարվեց խոսել Ցեղասպանության մասին

*Բայց տողատակով հասկացրեց, որ Մուշը հայկական տարածք է*

**Թուրք հասարակական գործիչ, երիտասարդական միավորումների ասոցիացիայի նախագահ Սալի Յուջենն արդեն մեկ շաբաթ Երեւանում է: Այցելության նպատակն է երկխոսություն ծավալել հայ եւ թուրք հասարակությունների միջեւ, համագործակցել հասարակական կազմակերպությունների հետ:**

**«Մեր կազմակերպությունը գտնվում եւ գործում է Մուշում: Կարծում եմ՝ այս հանգամանքը հայերի համար շատ կարեւոր է», ասաց նա:**

**Յուջենի առաջարկությունն է հող պատրաստել երկխոսության համար:**

**«Եթե հայ եւ թուրք ժողովուրդները կարողանան մոտիկից ճանաչել իրար, խնդիրները մի օր կլուծվեն: Մենք իրար չենք ճանաչում, առկա է կանխակալ վերաբերմունք: Պետք է խոսել ոչ թե անցյալի, այլ՝ ապագայի մասին: Եկել ենք այստեղ ապագան կերտելու: Մեր թիրախը հայ եւ թուրք երիտասարդների համագործակցությունն է: Եթե մի անգամ խոսենք անցյալից՝ անընդհատ կխոսենք», ասաց նա՝ հրաժարվելով խոսել Հայոց ցեղասպանության մասին եւ արգելելով լրագրողներին թեմայի վերաբերյալ հարցեր ուղղել իրեն:**

**Մեր կողմից հիշեցնենք, որ հրաժարվել խոսել պատմական անարդարության մասին, միաժամանակ առաջարկել համագործակցություն հասարակությունների միջեւ՝ խելամիտ չէ, որովհետեւ ողջ աշխարհն ու առաջին հերթին Թուրքիան քաջ գիտակցում է. հայ եւ թուրք հասարակությունների միջեւ երկխոսություն չի կայանա, մինչեւ Հայոց ցեղասպանության հարցը չճանաչվի: Հասարակությունների միջեւ այլ խնդիր չկա: Հետեւաբար, անիմաստ ժամանակի կորուստ է, երբ փորձում ես փրկել ինչ-որ բան, բայց ուղիղ ճանապարհով քայլելու փոխարեն վազում ես երկրորդական արահետներով:**

**«Ես չեմ ուզում խոսել Ցեղասպանության մասին: Եկել եմ երկու հասարակությունների միջեւ առկա խնդիրներից խոսելու», ասաց նա:**

**«Բացի Հայոց ցեղասպանության խնդրից, կա՞ն այլ խնդիրներ, որոնց պատճառով արդեն 95 տարի երկու հասարակությունների միջեւ երկխոսություն չի կայանում: Եթե կան՝ մատնանշեք», «Ազգ»-ի հարցին Յուջենը, երեւի պատասխան չգտնելով, բարկացավ, հրաժարվեց պատասխանել հարցին ու լքեց «Նովոտել» մամուլի ակումբի սրահը:** Հ. Հ.

# ԱՄՆ այցելել ցանկացողների ուշադրությանը

2010-ի մայիսի 31-ից Երեւանում ԱՄՆ դեսպանատունը ոչ ներգաղթային վիզաների համար դիմող անձանցից պահանջելու է ներկայացնել վիզայի դիմումի նոր ձեւ՝ դիմումի ինտերնետ տարբերակ, ձեւ DS-160, որը փոխարինում է ներկայումս օգտագործվող, վիզայի դիմումի երեք ձեւաթղթերն ընդգրկող էլեկտրոնային տարբերակներին: Այն դիմորդները, ովքեր լրացրած կլինեն ներկայումս գործող դիմումի ձեւերը մինչեւ մայիսի 15-ը, դրանք կարող են օգտագործել մինչեւ մայիսի 31-ը: 2010-ի մայիսի 31-ից բոլոր այն դիմորդները, ովքեր չեն լրացրել DS-160 դիմումի ձեւը, պարտավոր են այն լրացնել եւ ներկայանալ հարցազրույցի ավելի ուշ:

Ելնելով այն հանգամանքից, որ ամբողջ աշխարհում աճում է ԱՄՆ մուտքի վիզաների պահանջարկը, հյուպատոսական գործերի գրասենյակը շարունակում է օգտագործել նոր տեխնոլոգիաներ, արտոնագրերի դիմումների գործընթացի արդյունավետությունն ու ճշգրտությունը բարելավելու համար: Ոչ ներգաղթային արտոնագրերի DS-160 ձեւն իր առավելություններով կոչված է բարձրացնելու արտոնագրերի համար մեզ դիմող անձանց մատուցվող ծառայությունների որակը:

2010-ի մայիսի 31-ից ոչ ներգաղթային արտոնագրերի համար դիմող անձինք պետք է օգտագործեն արտոնագրի դիմումի նոր ձեւը: Արտոնագրերի դիմում ներկայացնողները կշարունակեն լրացնել դիմումներն առցանց (on-line) տարբերակով, ինչպես նախկինում էր: Այժմ դեսպանատունը ապահովում է հարցերի թարգմանություններ՝ լայնորեն օգտագործվող մի շարք լեզուներով, սակայն դիմումը պետք է լրացնել անգլերեն: Նոր տարբերակով դիմում ներկայացնողը պետք է արտոնագրի համար նախատեսված լուսանկարը ներբեռնի եւ դիմումը ուղարկի ինտերնետի միջոցով: DS-160 ձեւը լրացնելուց հետո արտոնագրի դիմում ներկայացնող անձը պետք է տպի դիմումի լրացումը հաստատող էջը եւ հարցազրույցի օրը ներկայացնի դեսպանատուն: Հ. Ա.

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԺԹ տարի

Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
**www.azg.am**

Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635

Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221

Հաշվապահութիւն (գովազդ) / հեռ 582960
Լրագրողների սենեակ / հեռ 581841
Համակարգչ. ծառայութիւն / հեռ 582483
*Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն* / հեռ 529353
Համակարգչային շարուածքը «Ազգ» թերթի
Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:
"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

AZG NEW PDF.qxd 30/04/2010 21:01 Page 1



# Նուբարաշենի թունաքիմիկատների գերեզմանոցը լուրջ էկոլոգիական վտանգ է

## *Մշակվել եւ ձեռնարկվում են ոչնչացման քայլեր*



Երբ 1976-ին ստեղծվեց Նուբարաշենի թունաքիմիկատների գերեզմանոցը, նախատեսված էր, որ պետք է ժամանակավոր բնույթ կրի, սակայն այսօր «ԽՍՀՄ-ից հասած կտակը» լուրջ էկոլոգիական վտանգ է ներկայացնում ողջ երկրի համար: Երեկ կայացած ասուլիսի ընթացքում, որին մասնակցում էին ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության տարածքների եւ բնակչության վարչության պետ Հովհաննես Եմիշյանը, ԵԱՀԿ երեւանյան գրասենյակի փոխդեսպան **Կարել Հոֆստրան** եւ «Արտակարգ ալիք» լրատվական կենտրոնի տնօրեն **Նիկոլայ Գրիգորյանը**, բոլոր բանախոսներն էլ իրավիճակը գնահատեցին խիստ անհանգստացնող: «Ըստ նախկին արխիվների՝ այսօր գերեզմանոցում կան 512 տոննա թունաքիմիկատներ, որոնցից ավելին, քան 300 տոննան, ըստ Ստոկհոլմի կոնվենցիայի, որը ստորագրել է նաեւ Հայաստանը, ենթակա են ոչնչացման», ասաց Եմիշյանը՝ ընդգծելով, որ վերջին ժամանակներում գերեզմանոցը գետաջրերի «մասնակցությամբ» տարածվել է 10 մետրով, հետեւաբար ավելացել է նաեւ վարակված տարածքի մակերեսը: ԵԱՀԿ փոխդեսպան Հոֆստրան նկատեց, որ հնարավոր է՝ վերոհիշյալ պատճառով, տարածքում լինի 6000 տոննա թունաքիմիկատ. «Անհրաժեշտ է անցկացնել նոր փորձաքննություն», նշեց **Հոֆստրան:** Վերջինս նաեւ տեղեկացրեց, որ իրենց գրասենյակը ակտիվորեն համագործակցում է արտակարգ իրավիճակների նախարարության, ինչպես նաեւ հասարակական կազմակերպությունների հետ, մշակվել է գործողությունների ծրագիր, որով պետք է ընթանան մի քանի փուլերով. «Նախ անհրաժեշտ է արտակարգ արձագանքում: Պետք է տարածքը, որը նախկինում փակ է եղել, եւ որը բացել են անհայտ անձինք, կրկին ծածկել, որպեսզի թունաքիմիկատները չտարածվեն: Ամբողջ վարակված տարածքը պետք է պարսպապատվի, որից հետո միայն մեր միջազգային գործընկերների հետ համատեղ կորոշենք, թե ինչպես պետք է ընթանա ոչնչացման փուլը: Առհասարակ այս գործողությունները իրականացնելու համար անհրաժեշտ են լուրջ ֆինանսական միջոցներ, միայն ոչնչացման համար, հնարավոր է, կարիք լինի շուրջ 15 մլն եվրոյի: Ես ուզում եմ շեշտել, որ ՀՀ կառավարությունը նախնական փուլի համար արդեն տրամադրել է որոշակի գումար», ասաց Հոֆստրան: Նա նաեւ տեղեկացրեց, որ Հայաստանում երկրորդ նման գերեզմանոցը գտնվում է Ալավերդիում. «Մենք այնտեղ էլ այժմ ուսումնասիրում ենք իրավիճակը», նշեց փոխդեսպանը: Նիկոլայ Գրիգորյանը, իր հերթին, տեղեկացրեց, որ այս ծրագրի իրականացման համար կառավարությունն արդեն բնապահպանության նախարարությանն է փոխանցել շուրջ 20-30 մլն դոլարի չափով գումար. «Բացի այդ, վարչապետը երեկ նամակներ է հղել մի շարք միջազգային համապատասխան կազմակերպությունների՝ ակնկալելով նրանց օգնությունը», ասաց Գրիգորյանը:

Ծրագրի ֆինանսավորումը, Հովհաննես Եմիշյանի խոսքերով, կատարվում է նաեւ ԵԱՀԿ գրասենյակի կողմից: Նա, անդրադառնալով թունաքիմիկատների գերեզմանոցի ոչնչացման աշխատանքների փուլերին, նշեց. «Առաջին փուլում մենք պետք է թունաքիմիկատները իդենտիֆիկացիայի ենթարկենք, պահեստավորենք դրանք, այնուհետեւ իրականացնենք ոչնչացումը: Ի դեպ, հաշվի առնելով երկրի շրջափակված լինելը, այս վերջին խնդիրը կարող է լուրջ խոչընդոտներ ունենալ, հուսով եմ, որ մեր միջազգային գործընկերները մեզ կօգնեն նաեւ այդ հարցում»: Եմիշյանը նաեւ տեղեկացրեց, որ «վարակված տարածքին» առավել մոտ են գտնվում մայրաքաղաքի Էրեբունի վարչական շրջանը, ինչպես նաեւ Ողջաբերդ, Գեղադիր, Մուշավան համայնքները. «Այս պահի դրությամբ մենք չունենք ուսումնասիրություններ տուժողների վերաբերյալ: Մենք չունենք նաեւ ուսումնասիրություններ, թե տվյալ տարածքում արածող կենդանիների կաթով արդյո՞ք վարակը փոխանցվում է մարդուն», ասաց Եմիշյանը՝ հավելելով, որ, եթե իրավիճակի լավացման ուղղությամբ քայլեր չձեռնարկվեն, ապա կլինեն նաեւ դիմումներ տուժողներից, քանի որ խնդիրն իրոք բավական լուրջ է: «Որեւէ քայլ չձեռնարկելու, տարածքը բաց թողնելու պարագայում, ջրերի միջոցով հնարավոր է, որ վարակն անցնի Գետառ, իսկ սրա լրջության մասին անիմաստ է խոսել», ավելացրեց Եմիշյանը: Ի դեպ՝ տարածքի բաց լինելու մասին. Նիկոլայ Գրիգորյանը նշեց, որ, «հայկական սովորության համաձայն», բացել են մարդիկ, որոնք «գանձ են փնտրել». «Այժմ ոստիկանությունում հարուցված է քրեական գործ, սակայն մեղավորները դեռեւս բացահայտված չեն», ասաց Գրիգորյանը:

Վերջում բանախոսները նշեցին, որ Հայաստանի տարածքում հնարավոր է, որ լինեն թունաքիմիկատների նաեւ անհայտ գերեզմանոցներ. «Մենք այժմ փորձում ենք ճշտել դրանց գոյությունը եւ գտնվելու վայրերը», եզրափակեց Հովհաննես Եմիշյանը:

ՀՈՎԻԿ ԱՖՅԱՆ

# Դեղորայքի շուկայի շնաձկները շահեցի՞ն

*1-ին էջից*

Հանձնաժողովի վերոնշյալ որոշումը, այլ կերպ, քան տարօրինակ, անվանել չի կարելի: Այն, որ բոլորիս աչքի առաջ տեղի ունեցած դեղերի գների բարձրացման երեւույթի պատճառները հանձնաժողովը, փաստորեն, չկարողացավ ապացուցել, խոսում է այն մասին, որ այս կառույցը, չնայած մոտ 10 տարվա գործունեությանը, դեռ լիարժեք կայացած չէ: Ճիշտ է, եղել են դեպքեր, երբ հանձնաժողովին հաջողվել է սաստել հակամրցակցային համաձայնություն կայացնող տնտեսվարողներին, ինչպես, օրինակ, ձվի գների չհիմնավորված բարձրացման համար՝ թռչնաբուծական ընկերություններին: Սակայն որ հանձնաժողովը շատ հաճախ գնում է իրադարձությունների հետեւից, որ նրա վարույթները տեւում են շատ երկար, եւ այդ ընթացքում գերիշխող դիրքը չարաշահողները կամ հակամրցակցային համաձայնության եկողները հասցնում են այնպիսի գերշահույթներ ստանալ, որ տարեկան շրջանառության 2 տոկոսի չափով տուգանք վճարելն անգամ նրանց չի կանգնեցնում, այս կառույցի անուժ լինելու հետեւանք է: Ընդ որում, ինչպես ցույց տվեց դեղերի գների հետ կապված հարցը, այդ տնտեսվարողներին նաեւ հաջողվում է խուսափել տուգանքներ վճարելուց: Նման մեկ այլ դեպք էլ արձանագրվել էր մի քանի տարի առաջ, երբ հանձնաժողովը տուգանեց ուղեվարձը 50 դրամից միաժամանակ 100 դրամ դարձրած միկրոավտոբուսները շահագործող ընկերություններին, բայց վերջիններս դատարանի միջոցով խուսափեցին այդ տուգանքը վճարելուց: Դեղերի բիզնեսով զբաղվող ընկերություններին, փաստորեն, դա հաջողվեց անկախ դատարանի որոշումից:

Ո՞րն էր պատճառը, որ դեղորայքի ոլորտում գործող ընկերությունների տուգանելու որոշումը չեղյալ համարվեց, ի՞նչ «որոշ հանգամանքներ» են նշել այդ ընկերությունները «ապացույցների մասով», ի՞նչ «մրցակցային» խնդիրներ կան, որոնք բացահայտելուց հետո հանձնաժողովը ձեռնարկելու է «բոլոր անհրաժեշտ միջոցառումները», եւ արդյո՞ք այդ միջոցառումների մեջ մտնում է այդ ընկերություններին կրկին տուգանելու հավանականությունը, թե՞ ի վերջո նրանք «մարսելու են» մեզ բոլորիս թալանելու միջոցով ստացած գերշահույթները: Այս մասին մանրամասներ հաղորդել, դժբախտաբար, հանձնաժողովը չի ցանկանում: Սակայն այս հարցերը, մնալով անպատասխան, գցելու են հանձնաժողովի եւ կառավարության հեղինակությունը, եւ լավ կլիներ, որ դրանց պատասխանները որքան հնարավոր է շուտ տրվեն, իսկ հակաշուկայական գործելակերպ դրսեւորած եւ հիվանդ կամ ծեր մարդկանց խնայողությունները կուլ տված դեղորայքի շուկայի շնաձկները փոխհատուցեն դրա դիմաց:

ՀԻՆ, ՆՈՐ ԵՎ ՆՈՐԱԳՈՒՅՆ ԳՈՐԾԵՐ

# Արգիշտի Կիվիրյանն իր դեմ մահափորձ իրականացնելու գործում կասկածում է Ախալքալաքի ոստիկանապետին

**2009-ի ապրիլի 30-ին՝ առավոտյան ժամը վեցի սահմաններում Նալբանդյան 9 հասցեում մահափորձ իրականացվեց Armenia Today եւ Bagin.info լրատվական կայքերի համակարգող Արգիշտի Կիվիրյանի նկատմամբ: Լրագրողներին ծեծելը, մեքենաներ պայթեցնելը, ցավոք, սովորական երեւույթ է դարձել, սակայն Կիվիրյանի գործն առանձնացավ, որովհետեւ ոչ թե փորձում էին վախեցնել կամ լռեցնել, այլ՝ սպանել: Կիվիրյանը հրաշքով փրկվեց՝ բռնելով կրակողի ձեռքը:**

**Մահափորձին անդրադարձան տեղական մամուլը, միջազգային կազմակերպությունները:**

**Կատարվածի կապակցությամբ Կենտրոնի ոստիկանությունը գործ հարուցեց 117 հոդվածի մասով՝ թեթեւ մարմնական վնասվածք:**

**«Անգամ իրավաբանական կրթություն չունեցող մարդու համար է ծիծաղելի, որ գործը նման հոդվածով է հարուցվում: Որոշ ժամանակ անց գործով սկսեց զբաղվել Ազգային անվտանգության ծառայությունն, ու քրեական գործ սկսվեց 34-104 հոդվածի 7-րդ ենթակետի համաձայն», «Ուրբաթ» ակումբում երեկ ասաց Արգիշտի Կիվիրյանը: Լրագրողը նկատում է, որ նախաքննության ընթացքին որեւէ կերպ չի միջամտել, չի լուսաբանել՝ գործի քննությանը չխոչընդոտելու համար:**

**Միջադեպից որոշ ժամանակ անց մահափորձ իրականացնելու կասկածանքով կալանավորվեցին Վլադիկ Սերոբյանն ու Գուրգեն Կիլիկյանը: Սակայն մարտ ամսին իրադարձություններն այլ կերպ զարգացան: Նախ նախաքննական մարմինը միջնորդություն ներկայացրեց՝ խափանման միջոցը երկարացնելու համար, իսկ մարտի 8-ին միջնորդությունը հետ վերցրեց. Սերոբյանն ու Կիլիկյանը հայտնվեցին ազատության մեջ:**

**«Գործի կապակցությամբ մեկ տարի իրականացվում է նախաքննություն, սակայն ճակատագիրը պարզ է: Այն կկասեցվի եւ կհայտնվի գրասեղանի հերթական դարակում», նկատում է Կիվիրյանը:**

**«Գործի սկզբից ոստիկանությունը զբաղված էր ոչ թե բացահայտելով, այլ՝ կոծկելով: Դեպքի վայրից կորում են պարկուճները, եւ միայն Գագիկ Շամշյանի՝ դեպքի վայրում արած լուսանկարների միջոցով հնարավոր եղավ ապացուցել, որ կրակոցներ են եղել: Ոստիկաններն իմ հարեւաններին համոզում էին, որ նրանք ոչ թե կրակոցներ են լսել, այլ՝ դռան շրխկոց: Ոստիկանությունը պատալեց նաեւ տեղազննությունը: Լուսանկարներում գեսնին գցված մահակները մեկ մի վայրում են, մեկ՝ այլ»:**

**Կիվիրյանը նկատում է, որ դեպքից հետո շատերը դասապարտեցին կատարվածը: «Խոսեց նաեւ Սերժ Սարգսյանի այդ ժամանակ մամլո խոսնակ Սամվել Ֆարմանյանն ու հայտարարեց, որ գործը գտնվում է նախագահի անմիջական ուշադրության տակ («Ազգն» այս հայտարարությանն անդրադարձել է 2009-ի մայիսի 5-ի համարում - Հ. Հ.): Բայց բոլորի համար էլ պարզ է՝ մինչեւ գլխավոր դատախազը գործը չտանի Բաղրամյան փողոց՝ նախագահի հետ համաձայնեցնելու, որեւէ որոշում չի կայացվի: Եթե Ֆարմանյանը հայտարարում է, որ գործը խիստ հսկողության տակ է, արդյո՞ք այդ պարագայում կասկածյալներին ազատ են արձակում», զարմանում է նա:**

**Կիվիրյանը վստահ է, որ մահափորձը կապված է իր մասնագիտական գործունեություն հետ: «Անձնական կյանքում թշնամիներ չունեմ»:**

**Թիվ մեկ եւ գլխավոր կասկածյալն էլ Ախալքալաքի ոստիկանապետ Սամվել Պետրոսյանն է: Կիվիրյանը Bagin.info կայքէջում հիմնականում անդրադառնում էր Ջավախքի, վիրահայության խնդիրներին: Հաճախ են տպագրվել հոդվածներ, որոնք անդրադառնում էին Ախալքալաքում Սամվել Պետրոսյանի գործողություններին: «Ոստիկանապետ նշանակվելուց հետո Ախալքալաքում սկսվեց հայկական կառույցների բնաջնջումը: Ասում են՝ վրացական իշխանությունները հետապնդում են հայերին, այդ ամենն իրականացնում է Սամվել Պետրոսյանը: Նրան դրել են Ջավախքը մաքրելու համար: Նրա ջանքերով է, որ Վահագն Չախալյանը բանտում է», ասաց Կիվիրյանը՝ հավելելով, որ ոստիկանապետը հոդվածների կապակցությամբ երբեւէ հերքում չի պահանջել:**

**«Անձամբ Պետրոսյանից սպառնալիք չի եղել, բայց շատ վայրերում՝ շատերի ներկայությամբ, իմ հասցեին սպառնալիքներ է հնչեցրել», ասաց նա:**

**Կիվիրյանը պատմում է, որ կասկածյալ Գուրգեն Կիլիկյանի հայրը 2009թ. փետրվարին կալանավորվել է Վրաստանում՝ կաշառք տալու եւ փաստաթղթեր կեղծելու մեղադրանքով: Վլադիկ Սերոբյանն էլ Ախալքալաքի ոստիկանապետի բարեկամն է: Լրագրողի տեղեկություններով վերոնշյալ անձինք մինչեւ ապրիլյան դեպքերը մեկնել են Ախալքալաք եւ հանդիպել Սամվել Պետրոսյանի հետ:**

**Իր կասկածները, մտահոգությունները ու փաստերը Կիվիրյանը հայտնել է Ազգային անվտանգության ծառայությանը, սակայն ապարդյուն: Կիվիրյանը համոզված է, որ իր գործը չի բացահայտվի: «Կա՞ լրագրող, որի դեմ բռնություն, մահափորձ է կիրառվել ու գործը բացահայտվել է: Սա էլ այդ շարքից է: Այս պարագայում մնում է ապավինել աստծուն»:**

ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

# Ոստիկանապետը ներողություն խնդրեց

**Հայաստանի ոստիկանապետ Ալիկ Սարգսյանը ներողություն է խնդրել բոլոր այն մարդկանցից, որոնց իր հայտարարությամբ ապատեղեկատվություն է տվել՝ պնդելով, թե Չարենցավանի ոստիկանությունում մահացած Վահան Խալաֆյանին ոչ ոք ծեծի չի ենթարկել:**

**Հիշեցնենք, որ հասուկ քննչական ծառայությունը ձեռք բերված ապացույցներով պարզել է, որ 24-ամյա երիտասարդը բռնությունների է ենթարկվել Չարենցավանի ոստիկանության քրեական հետախուզության բաժանմունքի պետ Աշոտ Հարությունյանի կողմից, որը հինգշաբթի օրն արդեն կալանավորվել է: «Ես պատժելու եմ իմ այն աշխատակիցներին, որոնք ինձ սխալ ինֆորմացիա են տվել՝ ինձ դնելով անհարմար վիճակի մեջ: Ովքեր հանցանք են կատարել՝ ծեծել են երիտասարդին, խոշտանգել են, բոլոր այդ մարդիկ պատժվելու են օրենքի խստագույն տառով: Ես նախապես ասում եմ՝ ոչ մեկին չեմ պաշտպանելու, մեղավորները պատժվելու են: Ես ծեծը երբեք չեմ խրախուսել, աշխատանքի ավելի ճիշտ մեթոդներ կան,- ասել է Ալիկ Սարգսյանը եւ հավելել,- Ինձ թող ներեն այն մարդիկ, որոնց ես իմ հայտարարությամբ ապատեղեկատվություն եմ տվել: Իսկ ինձ խաբողները պատժվելու են օրենքի ամենայն խստությամբ: Ես ոչ ոքի չեմ ներելու»:**

**Միաժամանակ, ոստիկանապետը կրկին պնդել է, որ Վահան Խալաֆյանը ինքնասպան է եղել՝ բացառելով սպանության վարկածը: «Ես հիմա էլ պնդում եմ, որ դա ինքնասպանություն է եղել՝ նա է դանակը վերցրել ու իրեն սպանել», ասել է Ալիկ Սարգսյանը:**

## Կենդանաշխարհ

# Այսօր մենք մեր յուղի մեջ տապակվում ենք

### Երեւանի կենդանաբանական այգում

***Կենդանաբանական այգի: Ընթերցողները երեւի կհիշեն իրենց մանկությունը, այցելությունները ծնողների հետ, հետո, երբ երեխաներ ունեցան, հետո, երբ պապիկ, տատիկ դարձան... Նույն զգացումն ապրեցի նաեւ ես, երբ շրջում էի այգու դատարկ տարածքում, միայն թե այգին այսօր այլ «տրամադրություն» ուներ: Ցո՞ւրտն էր, այցելուների պակա՞սը, շրջապատի եւ ֆլորայի ու ֆաունայի ոչ համահունչ լինե՞լը... Չգիտեմ: Մեծացանք մենք, մեծացավ այգին՝ 70 տարեկան է: Մարդկային կյանքի տեւողություն ունի: Ոչինչ չեմ մանրամասնում, անցնենք բուն հարցազրույցին՝ կենդանաբանական այգու տնօրեն պարոն Սահակ Աբովյանի հետ:***

**- Պարոն Աբովյան, շնորհավորում եմ Ձեզ եւ կենդանաբանական այգու ողջ անձնակազմին 70-ամյակի կապակցությամբ: Մինչ Ձեզ կհանդիպեի, շրջեցի այգու տարածքում: Գիտե՞ք ինչ նկատեցի. կենդանիները խղճուկ, կներեք, երեւի այլ հոմանիշ պետք է ընտրեի, շատ խեղճացած վիճակում էին: Գայլի, բորենու, առյուծի, վագրի, շնագայլի... տխուր աչքերն էին միայն նկատելի:**

- Ասեմ, լավ չեք շրջել: Ես Ձեզ հետ համաձայն չեմ: Կենդանիներն այսօր իրենց հասանելիք կերաբաժինը ստանում են: Ջերմասեր կենդանիների ազատավանդակները, ձմեռանոցները ջեռուցվում են: Միայն էլեկտրաէներգիայի համար վճարում ենք երկուսուկես միլիոն դրամ: Եղածին ավելացնենք արտաբյուջետային գումարները:

**- Բյուջեից ինչքա՞ն գումար եք ստանում եւ արտաբյուջետային եկամուտը որքա՞ն է կազմում, քանի՞ կենդանի ունեք եւ ի՞նչ տարածք է զբաղեցնում կենդանաբանական այգին:**

- 188 մլն դրամ բյուջեից եւ 42-45 մլն դրամ՝ արտաբյուջետային՝ կախված այցելուների քանակից: Ասեմ նաեւ, որ կենդանիները, երբ ցանկանում են, դուրս են գալիս բնից, ներս են գնում: Դա արդեն կենդանու ցանկությունն է: Իսկ ինչ վերաբերում է Ձեր նշած խղճուկ վիճակին, ասեմ՝ Ձեր ցանկությունը, ուզածը մի քիչ այլ է: Դուք մտածում եք, որ կենդանիներին անազատ պայմաններում չպետք է պահել (իհարկե, ես դա նկատի չունեի - Մ. Շ.): Ես լրիվ հասկանում եմ, բայց դա անհրաժեշտություն է, կենդանին պետք է լինի վանդակի մեջ, որպեսզի մեր երեխաները տեսնեն, ճանաչեն կենդանիներին: Կենդանաբանական այգու շնորհիվ է, որ կենդանիների տասնյակ տեսակներ, որոնք անհետացման եզրին էին, այսօր այգին ապահովում է նրանց շարունակականությունը: Ունենք 210 տեսակ, 2300 գլուխ: Այգու ընդհանուր տարածքը կազմում է 34 հազար քառակուսի մետր (1976 թ. մոտ 60 հազար քառ. մետր): Այգում կատարվում են նորոգման, նոր վանդակների պատրաստման աշխատանքներ:

**- Մենք ունե՞նք Դավթի եղջերու, վայրի ցուլ, Պրժեւալսկու ձի եւ այլն, եւ այլն:**

- Դավթի եղջերուն հենց Դավիթ անունով անգլիացի կոմսն է պահել, բայց 1800-ականներից վայրի բնության մեջ չի նկատվել, իսկ մենք ունեինք, ծերացան, նորը չկարողացանք բերել: Այսօր այգում չունենք, բայց այլ կենդանաբանական այգիներում կան... Պրժեւալսկու 5 գլուխ ձի ունենք, իսկ վայրի բնության մեջ չկան: Մի միջազգային կազմակերպություն ծրագիր մշակեց, որ այն այգիներից, որտեղ կան այդ ձիերից, բաց թողնեն վայրի բնություն: Այդ ծրագիրը հաջողվեց: Մոտ երկու-երեք տարի 10-15 գլուխ ձի ունեցանք: Մի քանի արու ունենք: Այդքանը մեզ հարկավոր չէ: Այլ կենդանաբանական այգիներին առաջարկեցինք, անգամ պատրաստ էինք նվիրել, միայն տեղափոխման ծախսերն իրենք հոգային: Ինչո՞ւ հասանք Դավթի եղջերուին: Ես կասեմ այն, ինչ կատարվում է այսօր: Ունենք 20 գլուխ մուֆլոն: Վայրի բնության մեջ չկան: Որսագողերի պատճառով պատերազմի ժամանակ շատ տեսակներ կորցրեցինք: (Մուֆլոն-անտառալեռնային կենդանի, տարածված են Կորսիկա եւ Սարդինիա կղզիներում: Կենդանու զանգվածը մոտ 50 կգ է: Կա ասիական մուֆլոն, որի կենդանի զանգվածը մոտ 80 կգ է... Այսինքն՝ մեր մուֆլոններն ավելի գեր են, մսատու, որոնց որսը պետականորեն արգելված է - Մ. Շ): Անգամ նպատակ ունենք մի քանի գլուխ տանել եւ բաց թողնել (որսագողերի աչքը լույս - Մ. Շ.): Եթե 5-10 գլուխ պահպանվի, արդեն հաջողություն է...

**- Կովկասյան հովվաշան մասին ի՞նչ կասեք, կարծես թե նրանք էլ են անհետացման եզրին:**

- Հովվաշո՞ւնը, գելխեղդի մասի՞ն է: Փառք Աստծո, սիրահար մարդիկ կան, որ պահում են, իհարկե՝ քիչ են:

**- Իսկ այգո՞ւմ:**

- Ունենք, մի քանի հատ, այն էլ օգտագործում ենք պահակային ծառայության համար: Պարսկական, կովկասյան հովազը բնության մեջ նկատվել է, նկարել են, նրանք էլ համարյա ոչնչացման եզրին են:

**- Խոսրովի անտառի մասին ի՞նչ կասեք: «Էտսի համեցեք» տարբերակն է աշխատում: Ինչո՞ւ կենդանաբանական այգին մտահոգված չլինի նաեւ այս հարցում: Դուք աշխատանքներ կատարո՞ւմ եք այնտեղ:**

- Մենք պետք է արդեն այսօր պահպանենք Խոսրովի անտառը:

**- Այսօ՞ր...**

- Բավականին աշխատանքներ են կատարվում, ֆինանսավորում կա: Խոսրովի անտառն այսօր լավ ձեռքերում է...

**- Ո՞ւմ...**

- Բնապահպանության նախարարության: Անտառը ցանկապատված է, ամեն մարդ չի կարող մուտք գործել, դարպասներ են տեղադրված: Շատ մեծ աշխատանք կատարեց, ցավոք՝ արդի վերջերս ստանված նախկին տնօրենը (Զուգադիպությո՞ւն, թե՞ պատահականություն էր. ստանվեց նաեւ ՀՀ որսորդների միության նախագահը - Մ. Շ.):

**- Ազգային ակադեմիայի կենդանաբանության ինստիտուտի եւ բնապահպանության նախարարության հետ Ձեր համագործակցությունն ի՞նչ բնույթի է:**

- Բացարձակ ոչ մի բնույթի: Նախարարությունը միայն թույլ է տալիս կենդանիների առքն ու վաճառքը: (Նույն պատասխանը ստացա նախարարության, ինչպես նաեւ Ազգային ակադեմիայի արդեն «Կենդանաբանության եւ ձկնաբուծության գիտական կենտրոն»-ի համապատասխան պաշտոնյաներից - Մ. Շ.): Վերադառնանք դարձյալ մուֆլոններին, ցանկանում ենք շատ բազմացնել եւ բնություն բաց թողնել: Եթե համապատասխան ֆինանսավորվող ծրագրեր լինեն, իհարկե կհամագործակցենք: Այսօր մենք մեր յուղով տապակվում ենք:

**- Քանի՞ տարի եք աշխատում այգում եւ քանի՞ աշխատող ունեք:**

- 18 տարի եւ 90 աշխատող:

**- «Կարմիր գրքում» ինչքա՞ն կենդանիներ են ավելացել, որոնք անհետացման եզրին են:**

- Ես ստույգ թիվ չեմ կարող ասել: Մոտ 20-30 տեսակ մեր այգում պահում ենք: Դրա համար բնապահպանության նախարարություն եւ գիտությունների ակադեմիա գոյություն ունեն: (Ազգային ակադեմիայից հայտնեցին, որ «Կարմիր գիրքը» շուտով տպագրության է պատրաստվում, թվերը պատրաստ են, եթե տարիներ առաջ ունեցել ենք «Կարմիր գրքում» գրանցված 99 տեսակ, այսօր արդեն 153 ողնաշարավոր եւ 155 անողնաշարավոր կենդանիներ են գրանցված, որոնք անհետացման եզրին են, 209-ով ավելացել են - Մ. Շ.):

Մուֆլոններից 2-3 գլուխ արդեն բաց ենք թողել վայրի բնություն:

**- Մուֆլոնների վրա շեշտը շատ եք դնում...**

- Մեր հնարավորությունը դա է, իսկ մուֆլոնը լավ, թանկարժեք կենդանի է...

**- Այսինքն՝ եկամտաբեր է, բիզնես...**

- Ոչ, առայժմ ոչ մի մուֆլոն դուրս չենք հանել: Այժմ նախարարության հետ ծրագիր ենք մշակել հայկական մուֆլոնների վերաբերյալ: Այս ծրագիրը հենց դրա համար է, որ որոշակի գլխաքանակ կարողանանք բաց թողնել բնություն...

**- Ինչո՞ւ չէ, նաեւ՝ վաճառել:**

- Իհարկե: Այսօր կարող ենք, բայց նպատակս է շատացնել, հետո նոր կմտածենք վաճառելու մասին:

**- Կադրային խնդիրներ ունե՞ք:**

- Ոչ, ունենք մեկ անասնաբույժ եւ 4 անասնաբույժ՝ 30 եւ 7-8 տարվա աշխատանքային փորձով:

**- Սերնդափոխության մասին չե՞ք մտածում: Չե՞ք ցանկանում գյուղատնտեսական ակադեմիա ավարտած, անգործ մնացած մասնագետներ ընդունել, թեկուզ կես դրույքով: Միեւնույնն է, վաղ թե ուշ փաստի առաջ եք կանգնելու, ինչպես պետական այլ կառույցներում է...**

- Ցանկալի կլինի, ես չասացի, Դո՛ւք ասացիք՝ կես դրույքով, մեր աշխատողների միջին աշխատավարձը կազմում է 50 հազար դրամ, ո՞ւր մնաց՝ կես դրույքով գան: Շատ կցանկանայի աշխատող մարդկանց ուղարկեինք վերապատրաստման:

**- Կառավարությունը գիտի՞ այդ մասին:**

- Ինչո՞ւ չգիտի: Հավատացեք, ես անգամ շնորհակալ եմ, որ այգու ֆինանսավորումը շարունակվում է, չի կրճատվել անգամ մեկ լումայով:

**- Այլ ֆինանսավորման աղբյուրներ ունե՞ք:**

- Իհարկե, օգնում են «Գրանդ Քենդին», «Մուլտի գրուպը» եւ տարբեր ՀԿ-ներ:

**- Լավ, որպես մարդ, կենդանասեր, պապիկ, ինչպե՞ս եք ընդունում այն փաստը, որ մի իշխ կազմակերպություն, որը գումարներ է ստանում բյուջեից, երկար տարիներ զբաղված է թափառող շների սպանդով:**

- Կրակելուն, սպանդին կտրականապես դեմ եմ, անգամ առաջարկություն է եղել սպանված շներով կերակրենք գազաններին: Ի՞նչ է, աշխարհով մեկ խայտառա՞կ լինեինք:

**- Այդ մասին գիտեի, այդ իսկ պատճառով էլ հարցս ուղղեցի: Դուք բացառո՞ւմ եք:**

- 18 տարի աշխատում եմ, նման բան չի եղել, դա սուտ է: Այդ կազմակերպությունը պետք է ամլացնի շներին, ունենա մեծ կացարան, կերակրի նրանց: Դա մեծ ծրագիր էր դեռեւս տարիներ առաջ եւ մեծ ծախսերի հետ է կապված:

**- Դուք կենդանիներ սիրող եք, քաղաքապետարանի ենթակայության տակ եք, ինչո՞ւ այդ հարցը երբեք չեք բարձրացնում...**

- Թող ամեն մարդ իր գործով զբաղվի: Մեր հոգսը շատ է...

**- Այսինքն՝ գիշատիչ կենդանուն կարելի է պահել, կերակրել, իսկ մարդու հավատարիմ բարեկամին սպանե՞լ...**

- Ես լիազորված անձ եմ միայն իմ տարածքում: Դուք եք այդ հարցը միշտ բարձրացնում: Թող Ձեր հարցադրմանը պատասխանեն դրա համար լիազորված մարդիկ: Կառավարությունը ֆինանսավորում է այդ ծրագիրը: Մասնավոր անձը կանի՞ ներդրումներ այդ հարցը լուծելու համար: (Կանի՝ եւ գործում է այդպիսի կառույց, միայն թե նրանց կողմից խոչընդոտելու հաճույքը պակասի - Մ. Շ.): Լավ, օրինակ, Բրիջիդ Բարդոն է այդ հարցով լուրջ զբաղվում աշխարհով մեկ (որի կողմից Հայաստանին ուղարկված գումարը կերան - Մ. Շ.), միայն ծրագիրը լիարժեք իրագործելու դեպքում թափառող շների քանակը կտրուկ կնվազի:

**ՄԱՐԻ ՇԻՇՄԱՆՅԱՆ**

# Սովորել այստեղ, ուր միայն փորձություն է սպասվում

Երեք օր շարունակ 6 երկրի ավելի քան 30 երիտասարդ մասնակիցներ անծանոթ միջավայրում եւ անծանոթ երկրում անցնում էին գյուղից գյուղ, ծանոթանում տեղաբնակների հետ, նրանց օգնում կատարելու գյուղական աշխատանքները եւ միաժամանակ փորձում գտնել տաքուկ անկյուն գիշերելու համար: Այս կերպ եւ այսպիսի ձեւով մասնակիցները փորձում էին ճանաչել սեփական եսը եւ սովորել կառավարել զգացմունքները:

Եվրոմիության «Երիտասարդությունը շարժման մեջ» ծրագրի ֆինանսական աջակցությամբ եվրոպական եւ հարավկովկասյան երկրների երիտասարդները հավաքվել էին Ուկրաինայում՝ Կարպատյան լեռներով շրջապատված փոքրիկ Սլավսկա ավանում, ծանոթանալու ու միմյանց օգնությամբ սովորելու եւ փորձ ձեռք բերելու համար:

«Հյուրանոցի պատերից դուրս՝ համայնքում մարդկանց հետ շփվելով, այլ մշակույթների ծանոթանալով եւ ինքնուրույն որոշումներ կայացնելով կրթվելու միջոցը բավականին արդյունավետ է: Մասնակիցները գուցե անմիջապես արդյունքը չեն նկատում, սակայն կյանքում նրանց ձեռք





բերած փորձառությունները չեն կորչում», ասաց ծրագրի կազմակերպիչ, իտալացի ուսուցանող **Ջանլուկա Իակուվելեն**: «Ստեղծագործ մտքեր» կոչվող ծրագիրը կազմակերպել էին Իտալիայում եւ Ուկրաինայում գործող երիտասարդական կազմակերպությունները: «Անծանոթ միջավայրն ու երբեմն նաեւ աննպաստ պայմանները տարբեր մասնակիցների մեջ տարբեր մոտեցումներ են առաջացնում: Սովորաբար լռակյաց եւ չշփվող աղջնակը կարող է լիդերական ունակություններ ցուցաբերել, իսկ արդեն հասուն տղան կարող է հրաժարվել հերթական փորձությունն անցնելուց», ասաց ուկրաինացի ուսուցանող **Տատյանա Պետրուխան**:

Փորձություններ, իսկապես, կային: Անձրեւոտ եւ ցուրտ եղանակին ոտքով անցնել մի քանի կիլոմետր ճանապարհ, ծանոթանալ բնակիչների հետ, երբ նրանցից շատերը տիրապետում էին միայն ուկրաիներենին: «Ամենահիշվող փորձառությունը թերեւս հասարակական տրանսպորտից օգտվելն էր: Գյուղերն իրար կապող ճանապարհ որպես այդպիսին գոյություն չունի: Մենք նստեցինք խորհրդային տարիների հին ավտոբուս, եւ տղաները ստիպված էին տասը րոպեն մեկ այն հրել ցեխոտ ճանապարհներին: Երբ այս ճանապարհները համեմատում էի մեր գյուղերի ճանապարհների հետ, հասկանում էի, թե որքան բարեկեցիկ են ապրում մերոնք», ասաց հունգարացի Յուդիթ Մոլնարը:

«Սովորել սեփական փորձառությամբ: Սա էր ծրագրի մեթոդը: Ինչպես կվարվեիր, եթե ստիպված լինեիր գիշերել կիսակառույց դպրոցի շենքում կամ ախոռում: Մեր մասնակիցներից յուրաքանչյուրն իր լուծումն էր գտնում: Մի քանիսի համար դա պարզապես նոր փորձ էր, մյուսների համար անսովոր եւ հետաքրքրական իրադրություն, մեկ ուրիշն էլ պարզապես սկսեց վիճել եւ մեղադրել մեզ իրեն այստեղ բերելու համար: Հետագայում, երբ ծրագրի այդ մասն ավարտվել էր եւ սկսվել էր վերլուծությունների շրջանը, մասնակիցները հասկացան, թե որքան կարեւոր է ճիշտ կառավարել սեփական զգացմունքները», ասաց Ջանլուկա Իակուվելեն:

Սեփական փորձով սովորելու ձեւը ոչ ֆորմալ կրթության տարածված մեթոդներից մեկն է: Այս կերպ յուրաքանչյուր մասնակից ձեռք է բերում ճիշտ այնքան փորձ եւ գիտելիք, որքան ցանկանում է:

**ԱՐԵՎԻԿ ԲԱԴԱԼՅԱՆ**
**Սլավսկա-Երեւան**

AZG NEW PDF.qxd 30/04/2010 21:01 Page 1



Զբիգնեւ Բժեզինսկին իր «Ընտրություն. Համաշխարհային տիրապետություն կամ գլոբալ լիդերություն» աշխարհաքաղաքական տրակտատում, խոսելով ԱՄՆ-ի համամոլորակային գերիշխանության մասին, նշում է, որ արդի պետությունների մեծ մասի արտաքին քաղաքականության մեջ ակնառու իրադարձություն է համարվում այդ պետության ղեկավարի պաշտոնական այցը Վաշինգտոն: Նման այցերն այդ երկրների ազգային լրատվամիջոցներում մանրազնին լուսաբանվում են որպես պատմական իրադարձություն: Արտասահմանցի դեսպանն իր կարիերայի բարձրագույն նվաճում է համարում, երբ նրան հաջողվում է կազմակերպել իր լիդերի կեսժամյա հանդիպումը ԱՄՆ-ի նախագահի հետ: Շատերն

# Որպեսզի արժանանան ամենահզորի «աջին»

ստիպված են լինում բավարարվել հինգրոպեանոց հանդիպումով Ձվաձեւ աշխատասենյակում եւ հուշ-լուսանկարումով: Քանի որ շաբաթական միջին հաշվով համաշխարհային մայրաքաղաք է ժամանում մեկ լիդեր, ապա այցերի մեծ մասն անտեսվում է ոչ միայն ամերիկյան համազգային ԶԼՄ-ների, այլեւ նույնիսկ վաշինգտոնյան տեղական մամուլի կողմից:

Բժեզինսկին ուշադրություն է հրավիրում նաեւ այն հանգամանքին, որ յուրաքանչյուր ամերիկացի նախագահ ստեղծում է կարեւորագույն այցելուների ընդունման իր ոճը: Կրտսեր Բուշն, օրինակ, ստեղծել էր հետեւյալ դրվածքը. 30-րոպեանոց հանդիպումը Ձվաձեւ աշխատասենյակում վկայել է լուրջ վերաբերմունքը հյուրի եւ նրա երկրի նկատմամբ. պետական ճաշկերույթ տրվել է ի նշան հատուկ ազգային հարաբերությունների. հանդիպումը Քեմփ-Դեւիդում, ընդգծված ոչ պաշտոնականությամբ, դիտվել է որպես անձնական մտերմության դրսեւորում. հյուրընկալումը Կրոուֆորդի ռանչոյում նշանակել է հյուրի ներկայացրած երկրի եւ ԱՄՆ-ի ղեկավարի հետ նրա անձնական հարաբերությունների կարեւորության ճանաչում (ի դեպ, այդ պատվին արժանացել են Մեծ Բրիտանիայի վարչապետ Թոնի Բլերը, Սաուդյան Արաբիայի թագաժառանգ Աբդուլլան եւ Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինը):

Նշված իրողությունով եւ Բժեզինսկին ընդգծում է, որ անհրաժեշտ է ճանաչել ԱՄՆ-ի գերիշխող դերը համաշխարհային գործերում եւ գլոբալ հաստատությունների կենտրոնացումը Վաշինգտոնում, որոնք արտացոլում են պատմական կապը ԱՄՆ-ի գլոբալ հզորության եւ վայրկենական կապի դարում գլոբալ փոխկապակցվածության միջեւ:

Ահա եւ այս ֆոնի վրա աննախադեպ է դառնում Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանի 45 րոպեանոց հանդիպումը ԱՄՆ-ի ղեկավարի հետ, ինչքան էլ մեզ հայտնի չլինեն դրա արդյունքները: Կարելի է չկասկածել, որ Վաշինգտոն հրավիրված 47 երկրների լիդերներից յուրաքանչյուրը կուզենար երես առ երես հանդիպել Բարաք Օբամայի հետ, քանի որ այդ անձի վերաբերմունքից իրոք շատ բան է կախված մոլորակի մասշտաբով:

Սակայն նեղացնենք հետաքրքրությունների շրջանակը մեր տարածաշրջանով: Ստացվեց այնպես, որ Ադրբեջանի ղեկավարը կարող էր միայն երազել վաշինգտոնյան հրավերի մասին: Այսօր Ալիեւբաշին «հակաամերիկյան» ըմբոստ հայտարարություններ է անում, չեղյալ է համարում ամերիկացիների հետ համատեղ զորավարժությունները եւ այլն: Մահացու վիրավորված է եւ չի թաքցնում դա, թեեւ ինքն էլ է հասկանում, որ ոչինչ չի կարող անել գերհզորի դեմ:

Իսկ ահա տարածաշրջանի մյուս լիդերի մասին հետաքրքրական տեղեկություններ է հաղորդում ռուսական մամուլը: Պարզվում է, որ Վրաստանի նախագահ Միխեիլ Սաակաշվիլին միլիոններ է ծախսել Սպիտակ տանը Օբամայի անձնական ընդունելությանն արժանանալու համար. նա վարձել է ամերիկյան երկու խոշոր լոբբիստական ընկերությունների, որոնց ղեկավարները նախկին բարձրաստիճան պաշտոնյաներ են եւ որոնք լայն կապեր ունեն Դեմոկրատական կուսակցության վերնախավում: Սաակաշվիլուն փորձել են օգնել նաեւ սենատոր Ջոն Մակքեյնը, ուրիշ լոբբիստներ: Ապարդյուն: Սաակաշվիլուն չեն ընդունել ոչ միայն նախագահ Օբաման ու պետքարտուղար Քլինթոնը, այլեւ Սենատի արտաքին գործերի կոմիտեի նախագահ Ջոն Քերին: Առավելագույնը, ինչին հասել են «վարձկան» լոբբիստները, եղել է այն, որ այցի նախօրեին Օբաման զանգահարել է Թբիլիսի եւ Սաակաշվիլուն խոստացել հանդիպում Հելսինկիի հանձնաժողովի ղեկավարի հետ: Առնվազն նվաստացուցիչ է:

Ռուսական մամուլը գուցեեւ չարախնդում է, սակայն անվերապահ հետեւություն չի անում, թե Ամերիկան ձեռ է քաշում Վրաստանից: Թեեւ այստեղ չեն բացառում, թե Սաակաշվիլուն Վաշինգտոնում չընդունելը կարող է նշանակել Վրաստանի նկատմամբ քաղաքական կուրսի փոփոխություն: Բանն այն է, որ ամերիկյան ու եվրոպական մամուլում ավելի ու ավելի հաճախ են հրապարակվում նյութեր, որոնցում Վաշինգտոնից պրագմատիզմ է պահանջվում արտաքին քաղաքականության մեջ առհասարակ եւ Վրաստանի հարցում՝ մասնավորապես: Խորհուրդ է տրվում խուսափել արկածախնդրությունից եւ առճակատման չմտնել Ռուսաստանի հետ: Ամերիկացի շատ փորձագետներ համաշխարհային գործերի տեսակետից անհամեմատ բարձր են գնահատում Մոսկվայի հետ հարաբերությունների բարելավման կուրսը: Նշվում է, որ երբ ԱՄՆ-ը անհարկի ակտիվություն է դրսեւորում Ռուսաստանի համար ավանդական ազդեցության ոլորտներում, տվյալ դեպքում՝ հետխորհրդային տարածքում, ապա Ռուսաստանը իրեն իրավունք է վերապահում ամուր ոտք դնել ԱՄՆ-ի նույնքան ավանդական «կալվածքը»՝ Լատինական Ամերիկա:

Ինչեւէ, Սերժ Սարգսյանը բավական ակտիվ արտաքին քաղաքականություն է ծավալել, եւ հուսանք, որ հաջողությունը կուղեկցի նրան: Մնում է միայն ակնկալել, որ նա շատ ավելի եռանդուն լինի ներքին քաղաքականության բնագավառում, լիարժեք արդյունքի հասնի, ինչպես ինքն է ասում, արդար պետության ստեղծման ճանապարհին: Ցավոք, տակավին ցածր է ժողովրդի վստահությունը իշխանությունների հանդեպ:

**ՌՈՒԲԵՆ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ**
**Մոսկվա**

# Դեմքը ծածկող հագուստի արգելք Բելգիայում



Բելգիայի խորհրդարանի ստորին պալատը ընդունել է փարանջա կրելն արգելող օրինագիծ: Ֆրանսպրեսը հաղորդում է, որ փաստաթուղթը կանանց արգելում է հասարակական վայրերում երեւալ դեմքը ծածկող եւ ինքնությունը թաքցնող հագուստով:

Եթե օրենքն ուժի մեջ մտնի, ապա Բելգիան կդառնա փարանջա կրելը լիովին արգելող առաջին պետությունը:

Օրինագծի օգտին քվեարկել է 136 պատգամավոր: Երկու պատգամավոր ձեռնպահ է մնացել: Նոր կանոնները խախտողին սպառնում է 15-25 եվրո տուգանք եւ (կամ) մեկշաբաթյա բանտարկություն:

Ըստ օրենքի, բացառություն կարող է արվել տոնական միջոցառումների, օրինակ՝ կառնավալների մասնակիցների համար: Նման դեպքերում փարանջա հագնողները պետք է հատուկ թույլտվություն ստանան տեղական իշխանություններից:

Օրենքի ընդունումը պատճառաբանվում է նրանով, որ փարանջայով քողարկված մարդուն անհնար է ճանաչել: Օրենսդիրները պնդում են, որ խոսքը որեւէ խտրականության մասին չէ:

Խորհրդարանի վերին պալատը երկու շաբաթ ունի նոր օրենքի դեմ առարկություններ ներկայացնելու համար, եթե այդպիսիք կան:

Ֆրանսիայում եւս ձեռնարկվում են համանման քայլեր: Ապրիլի 21-ին նախագահ Նիկոլա Սարկոզին կառավարությանը հանձնարարել է մշակել օրինագիծ, որով պետք է արգելվի հասարակական վայրերում փարանջա կրելը: Սպասվում է, որ փաստաթուղթը խորհրդարանին կներկայացվի արդեն մայիսին:

ՈՒԿՐԱԻՆԱ

# Յանուկովիչ. «Ռուսաստանի հետ առճակատումն ավարտված է»

## *«Կայունությունն ընդդիմության քաղաքական վախճանն է»*

**Ուկրաինայի նախագահ Վիկտոր Յանուկովիչը համերկրացիներին ուղղված դիմում-ելույթում հայտարարել է, որ Ռուսաստանի հետ առճակատման ժամանակահատվածն ավարտված է:**

**Նրա խոսքերով, երկկողմ հարաբերություններում լարվածության 5 տարիներից հետո իրավիճակի փոփոխումը զգալի ջանքեր է պահանջել: «Ինձ հաջողվեց դա անել: Այսուհետեւ մեր մեծ հարեւանի հետ երկխոսությունը կկառուցվի հավասարության, բարիդրացիության եւ առողջ գործնականության, այլ ոչ թե առճակատման եւ հակառուսական ելույթների վրա», խոստացել է նախագահը:**



**Յանուկովիչի խոսքերով, գազի եւ Սեւծովյան նավատորմի հետ կապված վերջին համաձայնագրերը կամրապնդեն Ուկրաինայի տնտեսությունը եւ էներգետիկ անվտանգությունը: «Ամբողջ քաղաքակիրթ աշխարհը» դրականորեն է արձագանքել այդ երկկողմ համաձայնություններին:**

**Համաձայնագրերից դժգոհ է ընդդիմությունը, որը, նախագահի կարծիքով, գիտակցաբար ապակայունացնում է երկրի իրադրությունը եւ «բարիկադների կոչ է անում», քանի որ կայունությունը, տնտեսական աճը եւ արտաքին քաղաքական անդորրը «ընդդիմության քաղաքական վախճանն են»:**

**Նախագահը հիշեցրել է խորհրդարանում օրերս տեղի ունեցած ընդհարումները, ընդդիմախոսների մասին ասելով. «Նրանց հարկավոր է պատերազմ: Քաղաքական արկածախնդիրները պատրաստ են ծխագլանիկներ նետել ոչ միայն խորհրդարանի դահլիճի, այլեւ ամբողջ Ուկրաինայի վրա»:**

**Յանուկովիչը խոստացել է հակահարված տալ ընդդիմությանը, թույլ չտալ երկրի ապակայունացում, ապահովել ժողովրդի բարօրություն եւ բարգավաճում: «Շուտով կհամոզվեք, որ մենք գնում ենք ճիշտ ուղղությամբ», եզրափակել է Յանուկովիչը:**

# Լեխ Կաչինսկու օդանավը թռել էր 1 ժամ ուշացումով

**Ապրիլի 10-ին Սմոլենսկի մոտակայքում ջախջախված «Տու-154»-ը՝ Լեհաստանի նախագահ Լեխ Կաչինսկու օդանավը, Վարշավայից թռել էր 1 ժամ ուշացումով: Այդ մասին հաղորդում է «Գազետա վիբորչա» թերթը, վկայակոչելով Լեհաստանի օդուժի ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատար Քշիշտոֆ Զալեսկու հայտարարությունը:**

**Նախապես որոշված էր, որ օդանավը Վարշավայից պետք է մեկնի 6 անց 30-ին, բայց իրականում օդ է բարձրացել գրեթե 7-ն անց 30-ին: «Պահեստային» ժամն անհրաժեշտ էր վատ եղանակի դեպքում թռիչքադաշտի վրա մի քանի պտույտ գործելու կամ ուրիշ օդանավակայան (Մինսկ կամ Վիտեբսկ) հասնելու համար:**

**Զալեսկին նշել է, որ ժամը 5-ին Վարշավայից լրագրողներ տարած «Յակ-40» օդանավը հաջող վայրէջք էր կատարել Սմոլենսկի մարզում: Ժամանակին մեկնելու դեպքում նախագահական օդանավը նույն տեղում վայրէջք կկատարեր «Յակ»-ից հետո: Բայց քիչ ավելի ուշ եղանակն արդեն սկսել էր վատանալ:**

**Ինչպես արդեն հաղորդվել է, «Տու-154»-ի կործանման պատճառներ են համարվում վատ տեսանելիությունը եւ օդաչուի սխալը: Աղետի բոլոր 96 զոհերի ինքնությունը պարզված է, մարմիններն ուղարկված են Լեհաստան եւ թաղված են: Վերջին տեղեկությունների համաձայն, կործանված օդանավի երեք «սեւ արկղերից» երկուսն արդեն վերծանված են:**

# Ամերիկուհիներին թույլատրվեց ծառայել սուզանավերում

**ԱՄՆ ծովուժի ղեկավարությունը կանանց թույլատրել է ծառայել սուզանավերում: Որոշմանը հավանություն է տվել պաշտպանության նախարար Ռոբերտ Գեյթսը, որը համապատասխան ծանուցում է ուղարկել Կոնգրեսին: Կոնգրեսականները չեն առարկել, եւ որոշումը մտել է ուժի մեջ:**

**Այս տարվա փետրվարին ԱՄՆ զինվորական ղեկավարությունը հայտարարեց, որ ժամանակն է վերանայելու կին զինծառայողների դերը մարտական գործողություններում: BBC-ն նշում է, որ մինչեւ օրս ամերիկյան բանակում եւ նավատորմում չէր թույլատրվում կանանց ծառայությունը ավանդաբար «մարտական» համարվող պաշտոններում:**

**ԱՄՆ ռազմածովային նավատորմում կանայք կազմում են անձնակազմի 15 տոկոսը: Ռազմանավերում եւ օդանավերում կանայք տղամարդկանց հետ մեկտեղ ծառայում են 1993 թվականից:**

**Ամերիկյան ծովուժի նախարար Ռեյ Մեյբուսի խոսքերով, երկրի նավատորմն այսօր չի կարող յոլա գնալ առանց կին զինծառայողների: «Մենք գիտենք, որ կան շատ տաղանդավոր կանայք, որոնք սուզանավերում ծառայելիս կարող են հասնել մեծ հաջողությունների», հայտարարել է նա:**

**Մինչեւ վերջերս ընդունված էր այն կարծիքը, որ սուզանավերում գոյություն ունեցող նեղվածքը մեծ անհարմարություններ կստեղծի տարասեռ զինծառայողների համար:**

**Ենթադրվում է, որ ստորջրյա ծառայության համար առաջին կանայք պատրաստ կլինեն մեկ տարուց: Սուզանավերում հարկաբաժինների հատակագծումը կփոփոխվի տղամարդկանց եւ կանանց ընդհանուր նավասենյակների առանձնացման նպատակով:**

**Առաջին կին զինծառայողները հավանաբար կծառայեն բալիստիկ հրթիռներ կրող սուզանավերում, քանի որ դրանք ավելի ընդարձակ են եւ չեն պահանջում անհապաղ վերափոխումներ:**

**Ամերիկյան ծովուժի կանոնադրության մեջ տեղի կունենան նաեւ այլ փոփոխություններ: Մասնավորապես դեկտեմբերի 31-ից սուզանավերում ծխելու արգելք կհաստատվի:**

AZG NEW PDF.qxd 30/04/2010 21:00 Page 1



Ապրիլի 24-ին Քյոլնի Ֆիլհարմոնիայում առաջին անգամ հնչեց Տիգրան Մանսուրյանի «Ubi est Abel frater tuus?» (Ո՞ւր է Աբել եղբայր քո) թավջութակի եւ նվագախմբի համար գրված կոնցերտը, որ փայլուն մեկնաբանեց հայտնի թավջութակահար Յան Ֆոգլերը՝ Սեմեոն Բիչկովի ղեկավարած WDR սիմֆոնիկ նվագախմբի ուղեկցությամբ:

Ինչպես օրեր առաջ էինք իրազեկել մեր ընթերցողներին, Մանսուրյանի հիշյալ ստեղծագործությունը գրվել է արեւմտագերմանական ռադիոյի սիմֆոնիկ նվագախմբի պատվերով: Ապրիլի 24-ին այն հնչեց մեկուսիկացի կոմպոզիտոր Սիլ-լով, այնուհետ հայրենիքն Արթիկում որոնելով, Քյոլնի Ֆիլհարմոնիայի բեմից հենց այդ տառապագին ոդիսականն է ներկայացնում, ու հայ ունկնդիրս, խոստովանեմ՝ չկարողացավ առանց հուզմունքի ունկնդրել թավջութակի լարերից դժվար պոկվող ողբը, որ ինչպես մաեստրոն է բնութագրում՝ ինքն իր տնից է բերում:

Ծափերը չէին լռում, մաեստրոն բեմ ելավ, խոնարհվեց, շնորհակալությամբ վերցրեց ծաղկեզամբյուղն ու չկարողացավ արագ հեռանալ՝ «Ubi est Abel frater tuus?»-ի «լռությանը» դահլիճը երկարատեւ ծափն էր հակադրում:

Մասնագետները դեռ իրենց խոսքն է ընտրվել, բայց ես փոքր տարիքից կարդացել եմ Վերֆելի «Մուսա լեռան 40 օրը» եւ շատ տպավորված էի, հիշում եմ՝ մի շաբաթ հանգիստ չէի կարողանում քնել գրքի ազդեցության տակ»: Այսպիսով՝ մի տեսակ ապրիլ 24-ն ինքնին արդեն ծրագիր էր ինձ համար գործը գրելիս, տեսա, որ ես պիտի գրեմ հենց էն գործը, որը այսօրվա համար ամենաճիշտն է լինելու՝ «Ո՞ւր է Աբել եղբայր քո»: Աստվածաշնչյան այս տողը, որ մարդու կողմից մարդուն սպանելու մասին առաջին վկայությունն է եւ առաջին դատապարտումը Աստծո կողմից: Սա ոչ միայն խորագիրն է, ամբողջ բովանդակությունն է այստեղից գալիս: Այս

# Ծափերով լցված լռություն

## Քյոլնի Մուզիկտրիենալե փառատոնը բացվեց Մանսուրյանի ապրիլքսանչորսյան կոնցերտով



վեստրե Ռեվուելթասի 1939-ին հեղինակած «La noche de los Mayas» նվագախմբի համար գրված սյուիտի, ինչպես նաեւ Իգոր Ստրավինսկու 1911-1913-ին հեղինակած «Le Sacre du printemps» երկու մասից բաղկացած ռուսական պատկերներ ներկայացնող ստեղծագործության կողքին՝ Մուզիկ տրիենալե փառատոնի բացման՝ «Հայրենիքի ծեսերը» վերնագրյալ համերգին:

2010-ի ապրիլի 24-ից մայիսի 16-ը վեցերորդ անգամ (առաջինը՝ 1994-ին, այնուհետ՝ 1997-ին, 2000-ին, 2004-ին, 2007-ին) անցկացվող արդի երաժշտությունը հանրությանը մատուցող Մուզիկ տրիենալեն 100 միջոցառում է նախատեսել անցկացնել, այդ թվում՝ 13 ստեղծագործություն հնչելու է առաջին անգամ: 20-րդ դարի՝ դասական, ջազ, աշխարհի երաժշտություն ներկայացնող ամենալուրջ փառատոններից մեկն է Քյոլնի Մուզիկ տրիենալեն: Փառատոնն այս անգամ կրում է «Հարենիք-հայրենազուրկ» խորագիրը: «Միստիկ բան կա, որ իմ կոնցերտը համընկել է հենց ապրիլ 24-ին», դեռեւս օրեր առաջ մեր զրույցում ասաց Տիգրան Մանսուրյանը:

Ֆիլհարմոնիայի դահլիճում հատուկենտ աթոռներ էին պարապ, հանրությունը բազմաշերտ էր՝ երաժշտության գիտակներ, ուսանողներ, նաեւ՝ դպրոցականներ, իսկ ժամը 20.15-ից դահլիճում ներկաների ստվար բազմությանը միացան WDR 3-ի ռադիո եւ 3sat-ի հեռուստաունկնդիրները: Ի դեպ, 3sat-ը համերգը հեռարձակելիս, մանրամասն խոսել է օրվա խորհրդի՝ Հայոց ցեղասպանության հիշատակի օրվա ու Մանսուրյանի կոնցերտի առնչության մասին, ընդգծելով նաեւ, թե հեղինակը հայ ժամանակակից ամենաճանաչված կոմպոզիտորն է: Նույնը թերեւս չներկայացվեց համերգի բացման ելույթներում, (մինչդեռ բավարար համարեցին համերգի ծրագիր գրքույկում մասնագիտական հանգամանալից անդրադարձը, ուր Մանսուրյանի կոնցերտի վերլուծությունը ներառում է հակիրճ պատմական ակնարկ Հայոց ցեղասպանության ողբերգությանը), բանախոսներն առավել կենտրոնացան հայրենիք՝ անվտանգություն, վստահություն, հայրենազուրկ՝ կորուստ ընկալումները մեկնաբանելու վրա: Մանավանդ ապրիլի 24-ին «Հայրենիք-հայրենազուրկ»-ն ամենից լավ կարող է հասկանալ հայ մարդը, չհեռանանք նյութից՝ հայ կոմպոզիտորը, ով ծնվել է Բեյրութում՝ ամերիկյան որբանոցում կյանք գտած հայ մորից սերե-

քը կասեն «Ubi est Abel frater tuus?»-ի մասին, իսկ լրագրողիս վերապահված է ներկայացնել նույն օրը համերգից առաջ Քյոլնի Մայր տաճարի հարեւանությամբ գտնվող սրճարաններից մեկում մաեստրոյի հետ անցկացրած մեր երկժամյա զրույցի՝ կոնցերտի մասին պատմող հատվածը՝ հակիրճ շարադրանքով: (Տիգրան Մանսուրյանի հետ մեր հարցազրույցի ամբողջական շարադրանքը՝ **«Ազգի»** առաջիկա մշակութային հավելվածում):

- Այո, սա պատվեր է: Անուններ կան, որ նվագում են իմ երաժշտությունը, օրինակ Յան Ֆոգլերը, որը մեծ հեղինակություն է՝ Դրեզդենի Մորիցբուրգ փառատոնի գեղարվեստական ղեկավարն է, 2008-ից նաեւ՝ Դրեզդենի երաժշտական փառատոնի գլխավոր տնօրենը: Թե՛ ակտիվ նվագող է, եւ թե՛ կազմակերպիչ: Իմ կոնցերտը, իմ գործերը քանի-քանի տարի նվագում է: Ըստ այդմ է այս պատվերը հայտնվել, իր նախաձեռնությունն է: Իսկ ես նրա գոյության մասին երկար ժամանակ ոչ էլ իմացել եմ, թե կա մեկը, որ նվագում է իմ երաժշտությունը: Երբ ինձ ներկայացրին գործի տեւողության, նվագախմբի կազմի մասին տվյալները (դրանք բոլորը պայմաններ են, որ նախօրոք պիտի իմանամ), նաեւ ժամկետների մասին, պարզվեց, որ ապրիլի 24-ին է, զարմացա եւ կարծեցի, թե իրենք նկատի են ունեցել իմ ապրիլ 24-ը: Հետո մտածեցի գրել իմ ապրիլ 24-ը, անկախ նրանից՝ իրենք մտածել են այդ մասին, թե՞ ոչ: Առիթ ունեցա Ֆոգլերին հանդիպել Լոս Անջելեսում՝ իր համերգից հետո: Շատ ջերմ հանդիպում եղավ: Ես նրան հարցրի՝ դու գիտե՞ս ապրիլ 24-ն ի՞նչ է ինձ համար: Ասաց. «Ոչ, զուտ պատահականություն է եղել, որ հենց այդ հարցի տակ մի զարհուրելի լռություն կա. սպանություն է, դրան հաջորդել է լռությունը՝ մեկը չկա, իսկ մյուսը հանցագործն է, այս երկու՝ անցյալ եւ ներկա էությունների լռությունը մի ահավոր լռություն է, եւ այդ լռության ֆոնի վրա է Աստծո հարցը՝ «Ո՞ւր է Աբել եղբայր քո»: Այս լռությունը գործի կարեւոր ելակետերից մեկն է:

**- Դրա ծնունդը պայմանավորված էր անպայման թավջութակի՞ մեկնաբանությամբ:**

- Թավջութակն առհասարակ, այս տեսակ թեմաների հետ կապված, միշտ գերադասել եմ:

**- Չարենցի «Մահվան տեսիլում» էլ առնչություն կա:**

- Թերեւս, ահավասիկ կա, այդպիսի կապ գոյություն ունի: Բայց ես կընդգծեի գործիքի ներքին դրամատիզմը, արտահայտչականության մեծ կարողությունները: Էն դիապազոնը, էն նրբերանգները, որ ունի թավջութակը, չափազանց հարուստ են, մանավանդ մռայլ գույները, շատ գեղեցիկ են: Անշուշտ, թավջութակը շատ հարմար է այս տեսակ մի իրավիճակ ստեղծելուն: Մի տեսակ՝ Վերածննդի շրջանի մռայլ մի ինտերիերի գունապատկերն է, ասենք՝ Լեոնարդո Դա Վինչի, թանձր գույների մի անկյուն՝ թավջութակը սա է: Թավջութակը շատ դժվար մի պայման ունի, թվում է, թե մեծ հնչյուն ունի, զորեղ բան է, ունի այո՛, բայց նվագախմբի դեմ հայտնվելիս ինքը շատ շուտ փակվում է: Ամենաաննշան, ավելորդ ստվերը, որ նվագախմբից, երաժիշտների հնչյուններից կարող է գալ, նրա ձայնը, հնչողությունը շատ հեշտ կլանում են: Այդ տեսակետից փխրուն է, եւ գրելիս հաշվի պիտի առնես:

ԱՆԱՀԻՏ ՀՈՎՍԵՓՅԱՆ
Գերմանիա

«ԵՐԿՐԻ ՕՐ»-40

# «Արեւորդիների» լուսանկարչական հայացքը

«Երկրի օրվա» 40-րդ տարեդարձին նվիրված՝ Վայրի բնության եւ մշակութային արժեքների պահպանման հիմնադրամի «Կանաչ սերունդ Հայաստան» ծրագրի ապրիլյան միջոցառումներն ավարտվեցին երեկ՝ «Վիվասել-ՄՏՍ»-ի՝ Ամիրյան փողոցի գրասենյակում կազմակերպված թեմատիկ լուսանկարչական ցուցահանդեսով: www.savethenature.am կայքէջում 2 ամիս առաջ հայտարարված «Ջուր» թեմայով լուսանկարչական մրցույթին մասնակցել են Երեւանի եւ Հայաստանի մարզերի «Արեւորդի» էկո-ակումբների սաները՝ շուրջ 100 աշխատանքներով: Քվեարկությունը կատարվել է բոլոր մասնակիցների միջեւ, եւ 2-րդ փուլ են անցել 16 հեղինակի 20 աշխատանքներ, որոնցից էլ ընտրվել են չորս լավագույն լուսանկարները՝ Նարե Ֆիլիպոսյանի, Հասմիկ Գալստյանի, Նարեկ Հայրապետյանի եւ Գեւորգ Սարգսյանի հեղինակությամբ: Հաղթողներին հանձնվեցին մրցանակները՝ 3 համակարգիչ եւ մեկ հեծանիվ, այն տրվեց ուրցաձորցի մասնակցին՝ Գեւորգ Սարգսյանին:




Ներկայացված լուսանկարչական աշխատանքներից շատերն աչքի էին ընկնում ոչ միայն տեխնիկական վարպետությամբ, նաեւ պահը զգալու, արձանագրելու ճաշակով, դրանք ոչ այնքան պարզ դասական էին, որքան՝ գեղագիտական, ինչպես, օրինակ՝ Նարե Ֆիլիպոսյանի բնապատկերային լուսանկարը:

Բացմանը ներկա էր հիմնադրամի գլխավոր հովանավոր «Վիվասել-ՄՏՍ»-ի տնօրեն **Ռալֆ Յիրիկյանը**, որը պատանիներին ավելի համարձակ գործելու եւ օբյեկտիվի առաջ ազատ լինելու խրախուսական խոսքեր ասաց: Հիմնադրամի տնօրեն **Ռուբեն Խաչատրյանը,** ամփոփելով անցնող ամսվա քաղաքաշավային միջոցառումները (5000-ից ավելի մասնակից, 19 միջոցառում, 1095 նորատունկ ծառեր եւ այլն), վերստին կարեւորեց բնապահպանական հիմնախնդիրներին երիտասարդ սերնդի մասնակցության անհրաժեշտությունը՝ որպես նոր մտածողության կրողների եւ այդ գիտակցությունը փոխանցողների:

Մ. Բ.

# «Սասուն» գիրքը Գեղամ Կիրակոսյանի վերջին աշխատությունն է

Անվանի պատմաբան, հերոս սասունցիների շառավիղ **Գեղամ Կիրակոսյանը**, բազմաթիվ մենագրությունների, հուշագրությունների եւ 40 գիտական հոդվածների հեղինակ է: Ցավոք, այսօր նա իր վերջին հանգրվանն է գտել Թալինի շրջանի Աշնակ գյուղի տոհմական գերեզմանոցում:

Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Գեղամ Կիրակոսյանի վերջին աշխատությունը՝ «Սասուն» վերտառությամբ, ընթերցողների եւ գիտական աշխարհին է ներկայացրել «Զանգակ-97» հրատարակչությունը: Գեղամ Կիրակոսյանը հավատարիմ մնալով պատմաբանի իր կոչմանը, գրքում ի հայտ է բերել պատմական ճշմարտությունն ու ներկայացրել, որքան էլ դաժան լինի այն ժողովուրդների ճակատագրում: Կիրակոսյան պատմաբանի առկայության պարագայում առավել եւս բացահայտվում են մեր բազմադարյան ժողովրդի մի կարեւոր հատվածի ճակատագիրն ամփոփող այն էջերը, որոնք մինչեւ օրս մնացել են կնճռոտ ու չմեկնաբանված: Խոսքը վերաբերում է Սասունի պատմությանը, որը, ցավոք, ամբողջովին ներկայացնել չհասցրեց տաղանդավոր գիտնականն ու հայրենանվեր երախտավորը: Նրա անժամանակ մահով ընդհատվեց մի մեծարժեք ուսումնասիրություն, որը սերունդներին որպես ավանդ կունենա իր շարունակությունը եւ կդառնա նոր ուսումնասիրությունների հենք:




Գեղամ Կիրակոսյանի «Սասուն» 215 էջանոց գրքում տեղ են գտել Սասունը Ասորեստանի եւ Արարատյան երկրի թագավորների արձանագրություններում, Սասունը IV-XV դարերում, Սասուն-Տարոնը Թոռնիկյանների իշխանության շրջանում, Սասունի տեղագրությունը, բաժինները եւ, իհարկե, ծանոթագրություններ՝ օգտագործված նյութերի, հեղինակների մասին: Յուրաքանչյուր բաժնում պատմաբանը փութաջանությամբ ու մանրակրկիտ ներկայացրել է շատ կարեւոր դեպքեր, իրադարձություններ, նաեւ օտարների արձագանքները, որոնք հատուկ նշանակություն ու կարեւորություն են տալիս տվյալ ժամանակաշրջանների իրողությանը:

Աշխատությունն ավարտվում է Սասունից բռնագաղթած Ռեհան տատի մի պատմությունով. «Լաո, Սասունի Ձրդնիկ գյուղի մեր տունը եռահարկ էր, երրորդ հարկը մի կողմից բաց էր եւ հարմար, ամռան շոգ գետնեքներին հով էր, գիշերները զով՝ քնելու համար: Հարկերը բարձրանում էին քարե աստիճաններով: Մի օր, կավե պուտուկը ձեռքիս իջնում էի երկրորդ հարկից, հանկարծ մածունով լիքը պուտուկը ընկավ իմ ձեռքից, քարե աստիճաններով գլորվելով իջավ բակը, բայց չկոտրվեց: «Իսկ թե ինչո՞ւ չի կոտրվել, տատը սիրով լի նշաձեւ ու գեղեցիկ աչքերով նայել է ու պատասխանել. «Լաո, մըռնիմ քըզի, Ձուխտակ գլուխ Մարաթուկը (խոսքը սարի մասին է-Մ. Մ.) մեր տան դիմացն է, պահպանեց, ահա թե ինչու չկոտրվեց»:

Ահա այսպես ամեն դրվագում, հեղինակը միաժամանակ ներկայացնում է հայ ժողովրդի հոգեւոր տաճարները, Մարաթա լեռան զորությունը Ռեհան տատի պատմության միջոցով, նաեւ՝ հայ գեղջկական կնոջ գեղեցկությունը, պարելաոճը եւ այլն:

«Սասուն» գիրքը ոչ միայն պատմական, այլեւ մեր նախնիների անցած բարդ ու դժվարին կյանքի ու ճակատագրի առհավատչյան է, որը հուսով եմ շատերի սեղանի գիրքը կդառնա:

ՄԱՐԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆ

AZG NEW PDF.qxd 30/04/2010 21:12 Page 1



# Արթուր Աբրահամը մտադրվել է հաղթել նոկաուտով

## Կառլ Ֆրոչը սպառնում էր ռինգ դուրս չգալ, եթե մրցավայրը փոխվի

Ինչպես հայտնի է, օգոստոսի 21-ին Արթուր Աբրահամը երկրորդ միջին քաշային կարգի 6 ուժեղագույն բռնցքամարտիկների մրցաշարի վերջին մենամարտը կանցկացնի բրիտանացի Կառլ Ֆրոչի հետ: Արթուրը ներկա է գտնվել ապրիլի 24-ին Դանիայում կայացած Միկել Կեսլերի եւ Կառլ Ֆրոչի մենամարտին: Այդ մրցավեճում մրցավարների միաձայն որոշմամբ հաղթանակը շնորհվել էր Միկել Կեսլերին, որը դարձավ երկրորդ միջին քաշային կարգում WBC-ի վարկածով աշխարհի չեմպիոն:



Այդ մենամարտից հետո Արթուր Աբրահամը հայտարարել է, որ չնայած մրցակիցն ուժեղ է, սակայն պատրաստվում է նոկաուտով հաղթել Ֆրոչին: Այդ մենամարտն ըստ նախնական պայմանավորվածության, պետք է կայանա անգլիական Նոթինգհեմ քաղաքում: Սակայն Արթուր Աբրահամը հույս ունի, որ մենամարտի վայրը կփոխվի եւ ինքը Ֆրոչի դեմ ռինգ դուրս կգա Բեռլինում:

Արթուրի պրոմոութեր Վիլֆրեդ Զաուեռլանդը տեղեկացրել է, որ մրցավեճի վայրը դեռեւս որոշված չէ: Մրցաշարի մրցակարգով միայն նախատեսված է, որ այդ մենամարտը պետք է անցկացվի Եվրոպայում: Իսկ մրցավայրի ընտրությունը պայմանավորված կլինի այն բանով, թե պրոմոութերներից որ մեկը մրցանակային ավելի մեծ գումար կառաջարկի:

Կառլ Ֆրոչը սպառնացել էր դուրս գալ մրցաշարից, եթե Արթուր Աբրահամի հետ մենամարտն Անգլիայից տեղափոխվի Գերմանիա. «Արդեն նախապես որոշված է, որ ես առաջին եւ երրորդ մենամարտերն անցկացնելու եմ տանը, երկրորդ մրցամարտը՝ հյուրընկալվելիս: Այդ մասին պայմանավորվել ենք Showtime հեռուստաալիքի ներկայացուցիչ Քեն Հերշմանի հետ: Ուստի կամ իմ մենամարտն Աբրահամի հետ կկայանա Անգլիայում, կամ ընդհանրապես տեղի չի ունենա եւ մրցաշարը ծիծաղի առարկա կդառնա»:

Սակայն հետագայում Ֆրոչը փոխել էր վճիռը, գտնելով, որ մրցաշարի մասնակցությունն ամենակարճ ճանապարհն է ոչ միայն հետ վերադարձնելու WBC-ի վարկածով աշխարհի չեմպիոնի տիտղոսը, այլեւ նվաճելու WBA-ի չեմպիոնական գոտին, որը պատկանում է մեկ այլ մասնակցի՝ Անդրե Ուորդին:

«Աբրահամի նկատմամբ հաղթանակն ինձ կիսաեզրափակիչի ուղեգիր կպարգեւի, իսկ հետո կլինի եզրափակիչ մենամարտը: Չի կարելի մոռանալ, որ 3 մենամարտից հետո կարող եմ աշխարհի բացարձակ չեմպիոն դառնալ: Կեսլերից կրած պարտությունն ինձ ավելի ուժեղ եւ նպատակասլաց կդարձնի», նշել է Ֆրոչը:

Հետաքրքրական է, որ երկրորդ միջին քաշային կարգի 6 ուժեղագույն բռնցքամարտիկների միջեւ անցկացված մենամարտերում առայժմ հաղթել են սեփական հարկի տակ հանդես եկած բռնցքամարտիկները:

# «Լիվերպուլը» շահեց ճակատամարտը, պարտվեց պատերազմում

Հայտնի դարձան ֆուտբոլի Եվրոպայի լիգայի եզրափակիչի մասնակիցները: Մայիսի 12-ին Համբուրգի «Նորդբանկ Արենա» մարզադաշտում պատվավոր մրցանակը կվիճարկեն Մադրիդի «Ատլետիկոն» եւ Լոնդոնի «Ֆուլհեմը»:



«Ատլետիկոն» Լիվերպուլում տեղի համանուն թիմի հետ ծանր մրցապայքարում, այն էլ լրացուցիչ ժամանակում եզրափակիչի ուղեգիր նվաճեց: Առաջին խաղում, սեփական հարկի տակ «Ատլետիկոն» հաղթել էր 1-0 հաշվով: Պատասխան խաղում լիվերպուլցիները 44-րդ րոպեին Ակվիլանիի խփած գոլի շնորհիվ հավասարեցրին 2 հանդիպումների ընդհանուր արդյունքը: Մինչեւ խաղավերջ հաշիվը մնաց անփոփոխ, թեեւ 2 թիմերն էլ ունեցան դարպասը գրավելու լավ հնարավորություններ:

Ամեն ինչ վճռվեց լրացուցիչ ժամանակում: 95-րդ րոպեին դաշտի տերերից Բենայունը 2-րդ գոլը խփեց «Ատլետիկոյի» դարպասը: Սակայն 7 րոպե անց Դիեգո Ֆոռլանը կրճատեց հաշվի տարբերությունը եւ այնքան երանելի ուղեգիր պարգեւեց իր թիմին: 2-1 հաշվով «Լիվերպուլի» հաղթանակն անգլիացիների համար հավասարազոր էր պարտության: «Լիվերպուլը» շահեց ճակատամարտը, սակայն պարտվեց պատերազմում:

«Համբուրգի» եւ «Ֆուլհեմի» առաջին մրցավեճում դարպասները մնացել էին անառիկ: Սեփական հարկի տակ «Ֆուլհեմը» հաղթեց 2-1 հաշվով եւ զրկեց «Համբուրգին» մասնակիցը դառնալու սեփական քաղաքում կայանալիք եզրափակիչ խաղին: Ճիշտ է, խաղասկիզբը հաջող դասավորվեց հյուրերի համար, որոնք 22-րդ րոպեին Պետրիչի հարվածից հետո հաշվի մեջ առաջ անցան: Սակայն հետագայում Դեյվիսն ու Գերան 2 գոլ խփեցին ու ապահովեցին «Ֆուլհեմի» հաղթանակը:

# Կարո Մուրադը ռինգ դուրս կգա այսօր

«Բեռլինի բռնցքամարտի նոր հույսը» վերնագրով Կարո Մուրադի մասին հրապարակում է տպագրել «Բիլդը»: Կիսածանր քաշային բռնցքամարտիկը մայիսի 1-ին Օլդենբուրգում ռինգ դուրս կգա պաշտպանելու WBO-ի չեմպիոնական իր գոտին՝ ամերիկացի 24-ամյա Ամի Թոմմի Կարպենսիի դեմ մրցամարտում:

«Շատ լավ, կենտրոնացած մարզվել եմ, պատրաստվել այս խաղին: Շաբաթ երեկո ուզում եմ հանդիսականներին ուժեղ մրցամարտ ցուցադրել եւ ապացուցել, որ իրավունք ունեմ աշխարհի չեմպիոնության համար պայքարելու: Տասը տարեկան էի, երբ Գերմանիա եկա: Ոչ կարդալ գիտեի, ոչ գրել: Սկզբում շատ դժվար էր՝ ընտանիքս փող չուներ: Մի մրցամարտի դիմաց ստանում էի մոտավորապես 1000 մարկ: Դա այն ժամանակ ինձ համար շատ մեծ գումար էր», ասել է Ուլի Վեգների 26-ամյա սանը: 2006-ից սկսյալ նա Զաուերլանդ ակումբի պրոֆեսիոնալներից է:

«Կարոն իմ ամենատաղանդավոր մարզիկներից մեկն է», իր սանին այսպես է ներկայացրել մարզիչ Ուլի Վեգները: 21 մրցամարտերում նրան ոչ մեկը չի կարողացել հաղթել: Սկզբում դարձել է Եվրոպայի չեմպիոն, այժմ՝ WBO-ի ինտերկոնտինենտալ չեմպիոնն է եւ բռնցքամարտի լեգենդ Բերնարդ Հոպկինսից հետո երկրորդն աշխարհում:

Մայիսի 1-ին տեղական ժամանակով 22.30-ին գերմանական հեռուստատեսության առաջին ալիքը՝ ARD-ն ուղիղ եթեր կհեռարձակի Կարո Մուրադ- Թոմմի Կարպենսի մրցամարտը:

**Ան. Հ.**

**Գերմանիա**

# Առաջին մրցակիցն ուզբեկներն են

Ֆուտբոլի Հայաստանի ազգային հավաքականն ընթացիկ մրցաշրջանում իր անդրանիկ ընկերական խաղը կանցկացնի մայիսի 25-ին: Այդ օրը Երեւանում հայ ֆուտբոլիստները կհյուրընկալեն Ուզբեկստանի ազգային հավաքականին:

ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

# Ռոբերտ Էմիյանը գլխավորեց թեթեւ ատլետիկայի ֆեդերացիան

Ինչպես տեղեկացանք ՀԱՕԿ-ի լրատվության պատասխանատու **Նաթելա Հովասափյանից,** Հայաստանի թեթեւ ատլետիկայի ֆեդերացիայի հաշվետու-ընտրական կոնֆերանսում անվանի հեռացատկորդ, ԽՍՀՄ, Եվրոպայի եւ աշխարհի առաջնությունների բազմակի չեմպիոն եւ մրցանակակիր Ռոբերտ Էմիյանն ընտրվել է կազմակերպության նախագահ:

2006-2009-ի կատարած աշխատանքների հաշվետվությամբ հանդես եկավ ֆեդերացիայի գլխավոր քարտուղար **Նարինե Շահբազյանը:** Լսվեց նաեւ վերստուգիչ հանձնաժողովի նախագահի զեկույցը: Մարզաձեւի զարգացման գործում ունեցած մեծ ծառայությունների համար թեթեւ ատլետիկայի մի շարք երախտավորների հանձնվեցին շնորհակալագրեր: Ֆեդերացիայի աշխատանքը գնահատվեց բավարար: 2006-ից ֆեդերացիայի նախագահի պաշտոնը զբաղեցրած Սարգիս Խաչատրյանն առողջական վիճակի պատճառով հրաժարական տվեց: Էմիյանի առաջարկով նա ընտրվեց ֆեդերացիայի պատվավոր նախագահ:

Ռոբերտ Էմիյանը ծնվել է Գյումրիում, 45 տարեկան է: Ամուսնացած է, ունի երկու դուստր: Երկրաշարժից հետո Էմիյանը տեղափոխվել է Ֆրանսիա: Երկար տարիներ մարզիչ է աշխատել: 9 տարի գործել է Քաթարում. սկզբում որպես մարզիչ, այնուհետեւ այդ երկրի ԱՕԿ-ի նախագահի գլխավոր խորհրդական: Էմիյանի 1987-ին սահմանած եվրոպական ռեկորդը (8 մ 86 սմ) չի գերազանցվել մինչեւ օրս: Նորընտիր նախագահը մեծ ճանաչում ու հեղինակություն ունի միջազգային մարզական կազմակերպություններում:

Ծրագրերի եւ անելիքների մասին խոսեց **Ռոբերտ Էմիյանը**: Ասաց, որ նախօրյակին հանդիպել է ՀԱՕԿ-ի նախագահ Գագիկ Ծառուկյանի հետ: Պարոն Ծառուկյանը ողջունել է Էմիյանի թեկնածությունը եւ հավանություն տվել նրա բոլոր ծրագրերին:

Հայաստանում չափազանց սուղ են մարզումային պայմանները: Չկա գոնե մեկ ժամանակակից թեթեւ ատլետիկական մարզաբազա: Բայց ամեն բան կարվի Լոնդոնի ամառային օլիմպիական խաղեր թեթեւ ատլետներ գործուղելու համար:

# Լիլիթ Մկրտչյանն անդրանիկ հաղթանակը տոնեց

Նալչիկում ընթացող շախմատի Գրան պրիի մրցաշարի 4-րդ տուրում վերջապես հաջողությունն ուղեկցեց Լիլիթ Մկրտչյանին, որը սեւերով անդրանիկ հաղթանակը տոնեց՝ առավելության հասնելով Ժաո Քյուի նկատմամբ: Իսկ ահա Էլինա Դանիելյանը շարունակեց անհաջող ելույթները՝ կրելով 3-րդ պարտությունը: Էլինան զիջեց Պիա Կրամլինգին: Էլինան կես միավորով եզրափակում է մրցաշարային աղյուսակը: Իսկ Լիլիթը մի փոքր բարելավեց իր վիճակը: Նա 2 միավորով Կովանովայի, Կոներուի, Յիլդիզի, Յիֆանի եւ Չենի հետ բաժանում է 4-9-րդ տեղերը:




Միանձնյա առաջատարի դիրքն ամրապնդեց Տատյանա Կոսինցեւան, որը հաղթելով Մոնգոնտուլին, վաստակեց 3,5 միավոր: Նրանից կես միավոր պակաս է վաստակել Նանա Ձագնիձեն, որը հաղթեց Բեթյուլ Յիլդիզին: 2,5 միավոր ունի Պիա Կրամլինգը: Յիֆանը հաղթեց Ժու Չենին: Միակ ոչ-ոքին գրանցվեց Կովանովայի եւ Կոներուի մրցավեճում:

5-րդ տուրում հայ շախմատիստուհիները կմրցեն միմյանց հետ: Մեծ հետաքրքրությամբ է սպասվում նաեւ առաջատարների՝ Կոսինցեւայի եւ Ձագնիձեի մրցավեճը:

# Առանց ուղեգրի ու մեդալի

Բաքվում ընթացող բռնցքամարտի աշխարհի պատանեկան առաջնությունը հայաստանցի բռնցքամարտիկների համար ժամկետից շուտ ավարտվեց: Մեր վերջին պատվիրակը՝ Հրայր Մաթեւոսյանը մինչեւ 60 կգ քաշային կարգում չկարողացավ հաղթահարել քառորդ եզրափակիչի արգելքը, ինչը նրան նվազագույնը բրոնզե մեդալ կապահովեր ու Սինգապուրում կայանալիք ամառային պատանեկան օլիմպիադայի ուղեգիր կտար: Սակայն Հրայրը 2-7 հաշվով զիջեց Գերմանիան ներկայացնող Թոմաս Վահրենհոլտին ու դուրս մնաց հետագա պայքարից: Հիշեցնենք, որ Բաքվում հանդես եկան հայաստանցի 6 բռնցքամարտիկներ, որոնցից լավագույնը Հրայր Մաթեւոսյանի ելույթն էր, որը 3 հաղթանակ տոնեց:

# Ադեբայորը հրաժեշտ տվեց հավաքականին

Տոգոյի հավաքականի եւ «Մանչեսթր Սիթիի» հարձակվող Էմանուել Ադեբայորը որոշել է այլեւս ազգային ընտրանում հանդես չգալ: Այս տարվա հունվարի 8-ին նա իր խաղընկերների հետ ավտոբուսով Անգոլա ուղեւորվելիս գնդակոծության էր ենթարկվել, որի հետեւանքով զոհվել էր 3 մարդ: Մինչ օրս էլ նա չի կարողանում ուշքի գալ պատահածից: Հենց դա էլ պատճառ դարձավ, որ Ադեբայորը հրաժեշտ տա հավաքականին, որի կազմում 38 խաղ է անցկացրել ու խփել 16 գնդակ:

«Տոգոն տաղանդավոր ֆուտբոլիստներ ունի: Անկեղծորեն ցանկանում եմ, որպեսզի ֆուտբոլիստներին հաջողվի հաղթահարել Անգոլայում տեղի ունեցած ողբերգության հետեւանքները ու հետագայում երկրին փառքի հասցնեն: Ես հավատում եմ նրանց», նշել է Ադեբայորը:

# 4 հազար եվրո Ռոբինյոյի մարզաշապիկի համար

Բրազիլական «Սանթոսի» հարձակվող Ռոբինյոյի 200 համարի մարզաշապիկն աճուրդում վաճառվել է 10 հազար ռեալով (մոտ 4 հազար եվրո): Աճուրդից ստացված ողջ հասույթը կուղղվի բարեգործական նպատակներով: Այդ մարզաշապիկով Ռոբինյոն հանդես է եկել Բրազիլիայի գավաթի 1/8 եզրափակիչում, «Գուարանիի» դեմ: Խաղն ավարտվել է «Սանթոսի» խոշոր հաշվով հաղթանակով (8-1): Մարզաշապիկի 200 համարը պայմանավորված էր «Սանթոսում» Ռոբինյոյի անցկացրած խաղերի քանակով:

Էջը պատրաստեց ԱԿՈՍ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

AZG NEW PDF.qxd 30/04/2010 21:56 Page 1





# «Ակնկալում ենք, որ ապարդյուն կանցնի 1915-ի նախաձեռնությունն Իսրայելում»

## *Հայտարարել է Թուրքիայի արտգործնախարարության խոսնակը, ապա եւ վերահաստատել իրենց դիրքորոշումը ղարաբաղյան հիմնահարցում*

Արձագանքելով Հայոց ցեղասպանության հարցը օրակարգ մտցնելու Իսրայելի խորհրդարան Քնեսեթի որոշմանը, ապրիլի 29-ին մամուլի հերթական ասուլիսում Թուրքիայի արտգործնախարարության խոսնակ **Բուրաք Օզուգերգինը** հիշեցրել է նախորդ տարիներին ցուցաբերված համանման նախաձեռնությունների մասին, ասելով. «Ակնկալում ենք, որ այս նախաձեռնությունը եւս ապարդյուն կանցնի, ինչպես եղել է նախորդ տարիներին: Խնդիրը պայմանավորված չէ սոսկ Իսրայելի խորհրդարանով: Մեր տեսակետները հայտնի են: Լավ կլինի, եթե պատմությունը մեկնաբանեն պատմաբանները»:

Նա ասուլիսում նշել է, որ առաջիկայում Իսրայել կգործուղվի արտգործնախարարության խորհրդական Ֆերիդուն Սինիրլիօղլուն: Այցի ընթացքում կքննարկվեն միջինարեւելյան խաղաղ կարգավորման գործընթացին եւ թուրք-իսրայելական հարաբերություններին առնչվող հարցեր: Հայկական կողմի հետ հանդիպման հնարավորության մասին վերաբերող հարցին ի պատասխան խոսնակը նշել է վաշինգտոնյան հանդիպումների մասին եւ ընդգծել, որ առաջիկայում Հայաստանի հետ որեւէ հանդիպում չի նախատեսվում:

Օզուգերգինը հրաժարվել է մեկնաբանել Մինսկի խմբի նախկին համանախագահող Մեթյու Բրայզայի Ադրբեջանում ԱՄՆ-ի դեսպան նշանակվելու մասին լուրերը, ավելացրել է, որ Հայաստանի հետ ստորագրված արձանագրություններն ու սկզբնավորված հարաբերությունների նորմալացման գործընթացն իրենց ամենեւին էլ չեն զրկում Ղարաբաղով հետաքրքրվելու հնարավորությունից, այդպիսի տրամաբանության համար քննադատել է հայկական կողմին:

Ապա նա շարունակել է. «Անհնար է հասկանալ այդ տրամաբանությունը: Եթե արձանագրությունները ստորագրել ենք, ուրեմն պետք է ձեռ ու ոտք քաշե՞նք տարածաշրջանից: Տարօրինակ տրամաբանություն է: Սա այն խաղը չէ, որ արդյունքների գումարը զրոյի հանգի: Այսինքն՝ եթե Հայաստանի հետ նորմալացումը շահի, ապա մենք պարտադիր պիտի կորցնենք Ղարաբաղում, կամ՝ հակառակը: Մաթեմատիկայում երկու պլյուս երկու՝ միշտ հավասար է չորսի, սակայն միջազգային հարաբերություններում այդ գումարը հինգ կամ վեց է լինում: Երբեմն գումարելիներն ավելի մեծ արժեք են ունենում, քան ընդհանուր գումարը: Այդպիսին է Կովկասի խաղաղությունը: Եթե Հայաստանն ու Ադրբեջանը նորմալացնեն իրենց հարաբերությունները, եւ մենք էլ նորմալացնենք մեր հարաբերությունները Հայաստանի հետ, ապա դրա հաղորդած լիցքը շատ ավելի մեծ կլինի: Աշխատում ենք հասնել դրան»:

Հ. Գ.

# Վիրահայերի խնդիրները՝ դեռեւս Համմարբերգի օրակարգից դուրս

**Եվրոպայի խորհրդի մարդու իրավունքների հարցերով հանձնակատար Թոմաս Համմարբերգը երեկ ժամանել է Վրաստան: Համմարբերգի այցելության հիմնական նպատակը կապված է Ռուսաստան-Վրաստան 2008 թ. օգոստոսյան պատերազմի հետեւանքների վերացման խնդիրների հետ:**

**Մասնավորապես, այս անգամ նշվում է, թե Համմարբերգը քննարկելու է հարավօսական սահմանի այս ու այն կողմում գերության մեջ հայտնված վրացիներին եւ օսերին ազատ արձակելու հարցը: Ինչպես նախապես հայտարարել էր ինքը՝ մարդու իրավունքների հանձնակատարը, 2008-ի օգոստոսյան պատերազմից հետո երկու կողմերից ազատ են արձակվել 100 գերի, սակայն դեռեւս մնում են անորոշության մեջ գտնվող անձինք, որ ցանկություն ունեն վերադառնալու իրենց բնակության վայրերը:**

**Հետաքրքրական է, թե Վրաստան այցելության ընթացքում արդյոք Համմարբերգը անդրադառնալո՞ւ է փոքրամասնությունների ներկայացուցիչների իրավունքների խնդիրներին, որոնց ինքն էլ անդրադարձել էր իր վերջին զեկույցներից մեկում:**

**Մինչ այդ ԵԽԽՎ-ում Ֆրանսիայի պատվիրակ Ֆրանսուա Ռոշբլուանը ապրիլի 28-ին Ստրասբուրգում ընթացող վեհաժողովի հերթական նստաշրջանում հարց ուղղեց ԵԽ մարդու իրավունքների հանձնակատարին, թե ինչու վերջինս անարձագանք է թողել Վրաստանում հայերի հանդեպ խտրականության մասին բողոք-նամակը:**

**Համմարբերգը պատասխանել է, թե ի վիճակի չի եղել զբաղվելու այդ հարցով, քանի որ վերջին մեկուկես տարում ԵԽ մարդու իրավունքների հանձնակատարը զբաղվել է ռուս-վրացական պատերազմի հետեւանքների եւ պահպանվող լարվածության հարցերով: Համմարբերգը, սակայն, հույս է հայտնել, որ շուտով կգա ժամանակը, երբ կկարողանա այդ տարածաշրջանում այլ հարցերի հետեւել:**

**Հիշեցնենք, որ «Ազգային փոքրամասնությունների լեզվական իրավունքները պետք է հարգվեն. դրանց մերժումը քայքայում է մարդու իրավունքները եւ միջհամայնքային ընդհարումներ առաջացնում» Համմարբերգի տարած հայտարարությունն էր դեռեւս ԵԽԽՎ նախորդ՝ ձմեռային նստաշրջանում: Փաստաթղթում եւս մեկ անգամ ամրագրվում էին ազգային փոքրամասնությունների լեզվական իրավունքների պաշտպանության միջազգային ու եվրոպական չափանիշները:**

**Վրաստանի հայ փոքրամասնության համար այս չափանիշների կիրառությունը հրատապ է: Այստեղ խնդիրներ են դարձել անձնագրերում անձնանունների գրության ձեւը, փողոցների անուններ եւ այլ տեղանուններ մայրենի լեզվով փակցնելը, դպրոցներում օգտագործվող լեզուն, իշխանությունների հետ հաղորդակցվելու լեզուն, փոքրամասնությունների լրատվամիջոցների հիմնադրման հնարավորությունը:**

Ա. Հ.

# Երեք հայ կպայքարեն բրիտանական խորհրդարանի ընտրություններում

**Մեծ Բրիտանիայում մայիսի 6-ին կայանալիք խորհրդարանի ընտրություններին կմասնակցեն երեք հայազգի թեկնածուներ՝ Հրաչ Քուբարցյանը, Քեթերինա Առաքելյանը եւ Հաքքի Աջղերյանը, նրանք բոլորն էլ իշխող՝ Լեյբորիստական կուսակցության անդամներ են:**

**Քեթերինա Առաքելյանը 8 տարի է, ինչ Լեյբորիստական կուսակցության անդամ է: «Ազատություն» ռադիոկայանի հետ զրույցում նա նշել է, որ ինքը առաջադրված է մի տարածքում, որտեղ հիմնականում բնակվում են պահպանողականները. «Ամեն դեպքում սա երկար ճանապարհի սկիզբն է: Կարծում եմ՝ կմասնակցեմ նաեւ հաջորդ ընտրություններին, հետո՝ նաեւ երրորդին: Նույնիսկ եթե 15 տարի տեւի, ես ուրախ կլինեմ նորից սկսել այս ճանապարհը: Ու հաջորդ անգամ թերեւս իմ հնարավորություններն ավելի մեծ կլինեն», ասել է Առաքելյանը: Ի դեպ, Առաքելյան ազգանունը Քեթերինայի մոր ազգանունն է, նա վերջերս է սկսել հայերեն սովորել. «Հայաստանում երբեք չեմ եղել, երկրի քաղաքական, տնտեսական վիճակի մասին քիչ բան գիտեմ, սակայն հույս ունեմ, որ մի օր անպայման մեքենայով կգնամ Հայաստան,- շարունակելով, Առաքելյանը պատմել է իր ընտանիքի անցյալից,- մորական պապս Արեւմտյան Հայաստանից էր: Առաքելյան ազգանունն իրականում կորսված էր: Երբ իմ նախնիները Ստամբուլից փախան 1915-ին, նրանք այստեղ հասան մի նավի մեջ թաքնված: Անգլիայում ապրելու համար հրաժարվեցին հայկական ազգանունից: Երբ ես 22 տարեկան էի, որոշեցի հոր բրիտանական ազգանունը փոխարինել մորս իրական ազգանվամբ», պատմել է Քեթերինա Առաքելյանը:**

**Հավելենք նաեւ, որ Բրիտանիայում խորհրդարանական ընտրություններն անցկացվում են 4 տարին մեկ, ընտրվում են 650 պատգամավորներ: Ընտրություններում հիմնական պայքարը գնում է երեք հիմնական կուսակցությունների՝ լեյբորիստների, պահպանողականների եւ լիբերալ-դեմոկրատների միջեւ:**

Հ. Ա.

ԾԱՆՈՒՑՈՒՄ

## Մրցույթի հրավեր 098/10/PRO

ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի հայաստանյան գրասենյակը հայտարարում է մրցույթ՝ Հայաստանում ԵՄ խորհրդատվական խմբի համար ինտերնետային կայքի ստեղծման նպատակով:

Մրցույթի հրավերին մանրամասն կարելի է ծանոթանալ ՄԱԶԾ-ի **http://www.undp.am** ինտերնետային կայքից կամ գնումների բաժնից Երեւան, Պետրոս Ադամյան 14 հասցեում:

Դիմել Գրիգոր Ախնոյանին՝ հեռ. 56 60 73+126 (ներքին), ժամը 14:00-16:00-ը:

Փաստաթղթերի ներկայացման վերջնաժամկետը՝ ս.թ. մայիսի 14, ժամը 17:00-ն:

# ԿԲ խորհրդի նիստում

Կենտրոնական բանկի խորհուրդը ապրիլի 30-ի նիստում, որը վարում էր ԿԲ նախագահ Արթուր Ջավադյանը, հաստատեց Հայաստանի Հանրապետության դրամավարկային քաղաքականության 2010 թ. երկրորդ եռամսյակի ծրագիրը:

*ԿԲ հասարակայնության հետ կապերի ծառայություն*

USAID FROM THE AMERICAN PEOPLE

FORECAST
*Human and Institutional Capacity Development Project*

## Job Vacancy Announcement

**OPENING DATE:** **April 30, 2010**
**CLOSING DATE:** **May 10, 2010**

**Title:** Business Planning Specialist / Gyumri Technopark Strategy Implementation

**Location:** Yerevan/Gyumri, Armenia

**Job Description:** The United States Agency for International Development (USAID) Mission to Armenia and the Academy for Educational Development (AED/Armenia) in collaboration with the RA Ministry of Economy are recruiting one local expert for the implementation of the master plan for creating a technopark for high-technology businesses in Gyumri. The incumbent will be working full time starting from May 2010 for a period of up to 40 working days. The Specialist will report to Gyumri Technopark Development Working Group. The program is funded by USAID through the Human and Institutional Capacity Development Project administered by AED.

**Job Responsibilities:**
- Work as a team with the international expert on strategy implementation for Gyumri Technopark
- Study and analyze the high technology sector in Armenia and in Gyumri in particular
- Study and analyze the strategic documents, plans, researches and the current projects related to development of Gyumry Technopark
- Prepare, facilitate (if needed) and summarize discussions, submit proposals on technopark strategy implementation resulting from the discussions
- Organize consulting meetings with beneficiaries and representatives of various sectors

**Required Qualifications:**
- University degree in management, business administration or other relevant sphere
- Relevant experience in business planning, organizational design, development and research
- Excellent communication and organizational skills
- Excellent analytical skills
- Excellent writing skills
- Fluency in English language

**HOW TO APPLY:**
Interested applicants should apply by submitting below mentioned documents to AED/Armenia office at aed@arminco.com. Applications will be accepted until **10:00 AM on Monday, May 10, 2010.**

**Required documents:**
- A letter including:
- Applicant's specific qualifications for the vacancy s/he is applying;
- Applicant's available date to start the work, work duration, as well as, the availability to work full-time;
- CV with detailed highlight of relevant experience
- Names and contact information for two referees
- A sample written document prepared by the applicant during her/his working or similar experience

***For further information please download the Scope of Work.***

***http://www.aed.am/announcement.php***

## Վաճառվում է տարածք

Օպերայի հարեւանությամբ:
Ունի լավագույն դիրքը Երեւանում:
Մուտքը Սայաթ-Նովա փողոցից: 1 հարկ, 1 գիծ, 125 քմ: Առաստաղը՝ 4,5 մետր՝ երկրորդ հարկ, կառուցելու հնարավորությամբ:
Ունի կիսանկուղ՝ 27 քմ: Կարող է վաճառվել մասնակի՝ 62 քմ:
***Հեռախոս՝ (+37494) 36 69 89, (+37455) 09 64 61:***

Ռիելթոր <<Ֆլորես>> Աճուրդի Տուն ՍՊԸ-ն <<Ադամանդ>> ԵԱՀԲ ՓԲԸ-ի հարթակում իրականացնելու է <<ՎՏԲ-Հայաստան Բանկ>> ՓԲԸ-ին օտարման իրավունքով պատկանող գույքի աճուրդային վաճառքը՝

- Բնակարան: Ընդ.մակերեսը 51 քմ,: Հասցե: ք. ք. Երեւան, Նոր-Նորք համայնք, Նորքի 4-րդ մ/շ, 2-րդ հատված, 21 շենք, բն. 8: Մեկնարկային գինը՝ 13800000 դրամ:

Աճուրդի փուլերը՝ դասական, այնուհետեւ հոլանդական եղանակներով՝ ք.Երեւան, Ագաթանգեղոսի 6/1 հասցեում, 01.06.2010թ-ից մինչեւ 30.08.2010թ. յուրաքանչյուր աշխատանքային օր ժ.11.00-ից - 17.00-ն: Լոտը կարելի է ուսումնասիրել համապատասխան հասցեում յուրաքանչյուր օր ժամը 11.00-ից 20.00-ն: Լրացուցիչ տեղեկությունների, այդ թվում՝ աճուրդների կանոնակարգին ծանոթանալու համար զանգահարել՝ (010) 56-31-15 կամ այցելել **www.borsa.am**:

**Կորել է**

**Վոլոդյա Հարությունյանի** էլեկտրատրանսպորտով անվճար երթեւեկելու մշտական տոմսը:
Համարել անվավեր:

**Կորել է**

**«Լավանդա նոր ֆարմ» ՍՊԸ-ի** դեղատան լիցենզիան՝ Կ-XX-001067, տրված ՀՀ ԱՆ կողմից 18.07.07 թ.:
Համարել անվավեր:

www. azg.am

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60

Լրատվական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրուած՝ 17.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան՝ 30.04.2010, գինը՝ 100 դրամ, տպագրւում է «Նոյեան Տապան» ՍՊԸ տպարանում՝ Իսահակեան 28: